2022, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (618)

Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Լեռնային Ղարաբաղն այսօր եւ վաղը» խորագրով համաժողով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի աջակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 11–13-ն Ամերիկայի Միացյալ Նահանգների Լոս Անջելես քաղաքում տեղի ունեցավ «Լեռնային Ղարաբաղն այսօր եւ վաղը» խորագրով համաժողով, որին իրենց մասնակցությունը բերեցին առաջատար մասնագետներ տարբեր երկրներից: Քննարկվեցին Արցախում հայկական մշակույթի պահպանության խնդիրները, անդրադարձ կատարվեց նաեւ աշխարհաքաղաքական, դիվանագիտական եւ իրավական հարցերին:

Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանությանը նվիրված միջազգային համաժողովների շարքում այս հանդիպումն արդեն չորրորդն է:

Քննարկվեցին արցախյան 44-օրյա պատերազմի հետեւանքով ադրբեջանական վերահսկողության տակ անցած հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված ծրագրերը՝ մտահոգությամբ անդրադառնալով հուշարձանների ոչնչացման փաստերին, ինչպես նաեւ արձանագրելով նախկինում Ադրբեջանի՝ հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հետեւողական քայլերը: Նշենք, որ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնվելուց հետո՝ 1997–2006 թվականներին, Նախիջեւանի ողջ տարածքում ոչնչացվեցին 89 եկեղեցի, մոտավորապես 6000 խաչքար եւ ավելի քան 22 000 տապանաքար:

Համաժողովն ընդգծեց, որ Ադրբեջանի կառավարությունը պետք է դադարեցնի պատմական հուշարձաններից հայկական հետքերը վերացնող աշխատանքային խմբի գործունեությունը եւ թույլատրի ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային մշակութային ժառանգության մասնագիտական ու մոնիտորինգի անկախ խմբերին եւ համապատասխան այլ կազմակերպություններին հետեւել Լեռնային Ղարաբաղի հուշարձանների ներկա վիճակին: Համապատասխան շահագրգիռ կողմերը, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պետք է ապահովեն աղոթատեղիներ եւ գերեզմանատներ մուտք գործելու հիմնարար իրավունքները:

Կազմակերպիչները խոստացան շարունակել համատեղ աշխատանքները եւ համաժողովի ավարտից հետո ներկայացնել գործողությունների հստակ ծրագիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ավստրիայում, Ռուսաստանի Դաշնությունում եւ ԱՄՆ-ում կայացած համաժողովների ժամանակ բարձրաձայնված խնդիրների ու դրանց լուծումների վերաբերյալ:

Միջազգային հանրությունը պետք է անհրաժեշտ ճնշում գործադրի ապահովելու Ադրբեջանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը՝ մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, ներառյալ մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ

Հրեշտակներ ու հրեշտակապետներ

Երկնային վերին զորքի ներկայացուցիչները, որ հրեշտակ են կոչվում, ըստ իրենց իսկ անվան մեկնաբանության, պատգամաբերներ եւ սպասավորներ են (եբր.՝ «պատգամավոր, դեսպան»): Հրեշտակները հոգեղեն՝ աննյութեղեն էակներ են, որ ստեղծվել են մարդկության արարումից առաջ: Համաձայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրերի եւ վարդապետների՝ երկնային, լուսեղեն այդ էակներն արարվել են արարչության առաջին օրը՝ հավիտենական լույսի ստեղծման հետ միասին (Ծննդ. Ա 3): Ուղղափառ (Օրթոդոքս) Եկեղեցու տեսակետի համաձայն՝ հրեշտակներն ու հրեշտակապետներն արարվել են նախքան վեցօրյա արարչությունը: Հրեշտակներն իրենց քանակով բազմաբյուր են («հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց», Դան. Է 10, Հայտ. Ե 10), իսկ բնությամբ՝ սուրբ եւ անյութեղեն: Հրեշտակների «բնակավայրը» Երկինքն է, սակայն ոչ թե մեր այս նյութեղեն, տեսանելի երկինքը, այլ «հոգեւոր», «լուսեղեն» երկնային օթեւանը: Ս. Գրիգոր Տաթեւացին, հրեշտակների այս «բնակավայրը» մյուս երկինքների հետ համեմատելով, անվանում է «երկրորդ երկինք»՝ այն զատորոշելով առաջին՝ «տեսանելի», եւ երրորդ՝ «իմանալի» երկինքներից: Ի դեպ, այս վերջին՝ «երրորդ երկնքում», համաձայն հայոց վարդապետի տեսության, բնակվում է Սուրբ Երրորդությունը:

Հրեշտակների հիմնական առաքելությունն Աստծու անընդհատ, մշտնջենավոր փառաբանությունն է: Աստծու հրահանգով նրանք կոչված են նաեւ մարդ արարածին սպասավորելու: Հետեւաբար նրանք պարզապես հոգիներ չեն, այլ սպասարկու հոգիներ, որոնք երկնաբնակ լինելով հանդերձ՝ իրենց մասնակցությունն են բերում նաեւ երկրային կյանքին՝ լինելով Աստծու նախախնամության գործիքն ու միջոցը եւ Նրա կողմից ուղարկվելով Իր ժողովրդին ու Իր կամքին ծառայելու: Կա տեսակետ, ըստ որի՝ հրեշտակապետներն ազգերի, իսկ հրեշտակներն անհատների պահապաններն են:

Թեպետ, Սուրբ Գրքի վկայության համաձայն, այս սպասարկու հոգիներն անթիվ ու անհամար են, սակայն գոյություն ունի որոշակի դասակարգում, որի մասին հայտնում է Սուրբ Դիոնիսիոս Արեոպագացին՝ աստվածային հայտնությամբ գրի առնելով եւ հաղորդելով, որ երկնային զորությունները՝ հրեշտակապետներն ու հրեշտակները, բաժանվում են ինը դասակարգերի: Այս յուրօրինակ աստիճանակարգության առնչությամբ Սուրբ Եփրեմ Ասորին ասում է. «Չնայած ծառայող հոգիները երկնքում անեղծ եւ անմահ են, սակայն Աստված հաճել է, որ Իր ծառաները եւս ունենան պետություններ, իշխանություններ եւ արտոնություններ»:

Հրեշտակային այդ ինը դասերը կամ աստիճաններն իրարից զանազանվում են թե՛ իրենց դիրքով եւ թե՛ առաքելությամբ: Համաձայն վերոնշյալ աստիճանակարգության՝ հրեշտակային ինը դասերն են.

ա. Աթոռներ (Ես. Զ 1, Եզեկ. Ժ 1, Դան. Է 9, Կող. Ա 16),
բ. Քերովբեներ (Ծննդ. Գ 24, Սաղմ. ԺԷ 11, ՂԸ 1, Եզեկ. Թ 3, Ժ 1–20, Ելք ԻԵ 18, Թվ. Է 89, Ա Թագ. Դ 4, Բ Թագ. Զ 2),
գ. Սերովբեներ (Ես. Զ 2, 6),
դ. Տերություններ (Կող. Ա 16),
ե. Զորություններ,
զ. Իշխանություններ (Կող. Ա 16),
է. Պետություններ (Կող. Ա 16),
ը. Հրեշտակապետներ,
թ. Հրեշտակներ:

Համաձայն հայրաբանական ընկալման՝ առաջին երեք դասերին պատկանող հրեշտակներն ամենամոտն են Աստծուն, ուստի անմիջականորեն իսկ ողողվում են Սուրբ Երրորդությունից ճառագող շնորհների լույսով: Մյուս երեք դասերի ներկայացուցիչները միջին դիրք են զբաղեցնում եւ իրենց շնորհի լույսը ստանում են առաջին դասերի ներկայացուցիչների միջոցով՝ իրենք էլ իրենց հերթին այդ շնորհները հաղորդելով առավել ստորին դիրքում գտնվող հրեշտակային դասերին: Այդ վերջին երեք դասերն իրենց դիրքով առավել մոտ են մարդկությանը՝ ի վերուստ տրված շնորհների եւ զորության համեմատ սպասավորելով մեզ: Եկեղեցական հայրերի վկայության համաձայն՝ Եկեղեցում «Աթոռներ»-ի դասին պատկանող հրեշտակների խորհուրդը կրում են նահապետները: «Քերովբեներ»-ի երկրային փոխանորդներն են օրենսդիրները: Աստվածաշնչյան դատավորները խորհրդանշում են «Սերովբեներ»-ին, քահանաները՝ «Տերություններ»-ին, թագավորները՝ «Զորություններ»-ին, մարգարեները՝ «Իշխանություններ»-ին, առաքյալները՝ «Պետություններ»-ին, ավետարանիչները՝ «Հրեշտակապետներ»-ին, իսկ վարդապետներն էլ՝ «Հրեշտակներ»-ին:

Ս. Գրիգոր Տաթեւացին նշում է, որ ամեն մարդ դեռեւս մոր որովայնում, բանական հոգի ստանալուց ի վեր, ունենում է իր պահապան հրեշտակը: Մեկ այլ տեսակետի համաձայն, որի կրողը Ռուս Ուղղափառ Եկեղեցին է, մարդու պահապան հրեշտակը նրան է տրվում միայն մկրտության ժամանակ, ինչից եւ ենթադրաբար բխում է, որ պահապան հրեշտակ կարող են ունենալ միայն քրիստոնյաները. մինչդեռ հրեշտակների գոյության մասին խոսվում է աշխարհի տարբեր կրոններում: Օրինակ՝ զրադաշտականության մեջ հայտնի է գերբնական, թեւավոր մի ուժ, որը մարդու ծննդյան օրվանից ուղեկցում է նրան՝ դառնալով յուրաքանչյուր բանական արարածի խիղճը: Մահմեդականության մեջ այն տեսակետն է արտահայտվում, որ յուրաքանչյուր մարդու մի ուսին մշտապես նստած է մի հրեշտակ, որը գրանցում է տվյալ անձի բարի գործերը, իսկ մյուս ուսին՝ վատ արարքները գրի առնող հրեշտակը: ➥ էջ 2

Հրեշտակներ ու հրեշտակապետներ

Ուշագրավ է, որ Նոր Կտակարանում «հրեշտակապետ» տիտղոսը տրվում է միայն Միքայելին: Ավելի ուշ արդեն այդ տիտղոսը տարածվում է նաեւ Գաբրիելի եւ Ռաֆայելի վրա: Միքայել հրեշտակապետը, երկնային զորությունների հրամանատարը լինելով, պայքարում է չարի դեմ եւ պաշտպանում բարին: Դա է նշանակում նաեւ հրեշտակապետի անունը. երբ սատանան եւ Աստծու դեմ ապստամբած դեւերի բազմությունը հակառակվում են աստվածային ծրագրերին, Միքայելը նրանց դեմ է դուրս գալիս եւ պաշտպանում այդ ծրագրերի սրբությունը՝ ջերմեռանդորեն բացականչելով՝ «Մի՞ քա էլ», որ նշանակում է՝ «Ո՞վ է Աստծու նման»: Միքայել հրեշտակապետը, Արարչին հավատարիմ հրեշտակների զորքի հրամանատարությունն ստանձնելով, պատերազմում է սատանայի եւ Աստծու դեմ ապստամբած մյուս հրեշտակների՝ դեւերի դեմ ու նրանց վտարում երկնքից:

Այդ ամենից հետո, երբ սատանան փորձում է Արարչի դեմ ունեցած իր վրեժը լուծել Աստծու պատկերն ու նմանությունն ունեցող մարդ արարածից, Միքայել հրեշտակապետն իր պաշտպանության տակ է առնում նաեւ մարդուն: Բացի Հայտնության գրքում առկա հիշատակությունից (տես Հայտ. ԺԲ 7)՝ Միքայել հրեշտակապետի մասին պատմվում է նաեւ Դանիելի մարգարեության մեջ, ուր Միքայելը հանդես է գալիս որպես «ավագ իշխան» (Դան. Ժ 13, 21, ԺԲ 1), ինչպես նաեւ Հուդա Տյառնեղբոր Ընդհանրական նամակում (տես Հուդա Թ):

Համաձայն քրիստոնեական ավանդության՝ Միքայել հրեշտակապետն է ընդունում հանգուցյալների հոգիները՝ կշռելով ու բաղդատելով մահացածների սրտում եղող բարին ու չարը: Ահա թե ինչու Միքայել հրեշտակապետի խորհրդանշաններն են սուրը եւ կշեռքը՝ հիմնվելով Հեսուի գրքի նշյալ՝ Ե 13–16 հատվածի վրա: Սուրը խորհրդանշում է չարի դեմ պայքարը, իսկ ահա կշեռքը արդարներին ու մեղավորներին դատելու իրավունքով օժտված հրեշտակապետի՝ մարդկանց հոգիներն Աստծու դատաստանին ներկայացնելու խորհուրդն ունի: Ուստի Միքայել հրեշտակապետը հաճախ պատկերվում է այդ երկու խորհրդանշանները միաժամանակ իր ձեռքում պահած:

Առհասարակ բոլոր սրբապատկերներում Միքայել հրեշտակապետը պատկերվում է ոսկեզօծ սպառազինությամբ՝ վիշապի կերպարանք ունեցող սատանային շղթայելիս կամ սրահարելիս, կամ՝ բարին ու չարը «չափելու» վերոնշյալ խորհրդաբանության համաձայն՝ կշեռքը ձեռքին բռնած: Սովորաբար կշեռքի մի նժարին պատկերված է լինում մարդը, մյուսին՝ դեւերը, որոնք ամեն կերպ փորձում են իրենց կողմը թեքել կշեռքը: Երբեմն էլ կշեռքի նժարների վրա պատկերվում են մարդու բարի կամ չար մտքերը, խոսքերն ու գործերը խորհրդանշող սպիտակ ու սեւ քարեր: Հայկական պատկերագրության մեջ գերակշռում է այն տեսարանը, երբ Միքայել հրեշտակապետի կշեռքի մի նժարին դրված են բազմաթիվ սեւ քարեր, իսկ մյուսին միայն մեկ սպիտակ քար է դրված. այդ մեկ սպիտակը հակակշռում է այն բազմաթիվ սեւ քարերին, որքան էլ որ սեւ քարեր պարունակող նժարից կախված դեւերը ջանում են կշեռքի նժարն իրենց կողմը թեքել՝ ապարդյուն վատնելով իրենց ջանքերը:

Նշենք նաեւ մի հետաքրքիր փաստ. Արեւելքում Միքայել հրեշտակապետի նկատմամբ մեծագույն պատկառանք էր ձեւավորվել: Արդեն Թ դարում միայն Կ. Պոլիս քաղաքում եւ քաղաքային արվարձաններում Միքայել հրեշտակապետի անունը կրող երեսուն վանք ու եկեղեցի կային:

Ռուսական կայսրության մայրաքաղաքում Միքայել հրեշտակապետին է ձոնվել Կրեմլի այն տաճարը, որտեղ կատարվում էին կայսերական հուղարկավորությունները: Իսկ ահա Արեւմուտքում հրեշտակապետի աշխարհահռչակ սրբավայրերից է Սուրբ Միքայելի լեռ կոչվող վանքը Նորմանդիայում: Ամենանշանավոր ու կարեւորագույն սրբավայրը, սակայն, գտնվում է իտալական թերակղզու հարավարեւելյան հատվածում՝ Գարգանոյի լեռներում:

Գաբրիել հրեշտակապետը, որ դեռեւս Հին Կտակարանից սկսած՝ հանդես է գալիս Փրկչի գալստյանն առնչվող խորհուրդները մարգարեներին բացահայտելու եւ մեկնաբանելու առաքելությամբ, իր որոշակի գործառույթն է իրականացնում նաեւ Նոր Կտակարանում՝ Մարիամ Աստվածածնին հաղորդելով աշխարհի մեծագույն ավետիսը: Ինչ վերաբերում է հրեշտակապետի անվանը, ապա պետք է նշել, որ թեպետ Ս. Գրիգոր Տաթեւացին Գաբրիել անունը թարգմանում է որպես «Աստծու պատկեր», սակայն ընդունված է նաեւ այն տեսակետը, ըստ որի՝ Գաբրիել նշանակում է Աստծու մարդ՝ «Այր Աստուծոյ» կամ «Զօրութիւն Աստուծոյ»:

Հրեական մատենագրության մեջ Գաբրիել հրեշտակապետը ներկայացվում է Տիրոջ գահի առջեւ մշտապես կանգնած՝ մարդկանց օրհնելիս կամ նրանց համար բարեխոսելիս: Ինչպես հայտնի է Ենովքի պարականոն գրքից, Գաբրիել հրեշտակապետը հատուկ պատասխանատվություն է կրում դրախտի համար: Մյուս հրեշտակապետների հետ Գաբրիելը եւս պետք է մասնակցի վերջին դատաստանին, որի մասին խոսվում է նաեւ Նոր Կտակարանում (տես Հայտ. Ը 2): Գաբրիել հրեշտակապետը վերջին դատաստանի ժամանակ պիտի հնչեցնի մահացածների հարության փողը. «Գաբրիէլեան փողն գոչէ, սուրբք ամենայն անդր հաւաքին» (Ս. Ներսէս Շնորհալի): Գաբրիել հրեշտակապետն Աստվածաշնչում հիշատակվում է Դանիելի մարգարեության մեջ (Դան. Ը 16, Թ 21)՝ որպես արագաշարժ եւ թռչող էակ, որն առաջացնում է մարգարեի զարմանքը (Դան. Ը 17): Իսկ ահա Զաքարիային Գաբրիել հրեշտակապետը բացահայտում է իր ով լինելը՝ ասելով. «Ես Գաբրիելն եմ, որ կանգնում եմ Աստծու առաջ. ես ուղարկվեցի խոսելու քեզ հետ եւ այդ բանը քեզ ավետելու» (Ղուկ. Ա 19): Թե՛ այս, թե՛ Աստվածածնի ավետիսի (Ղուկ. Ա 26–35) դրվագները ցույց են տալիս, որ Գաբրիել հրեշտակապետն անմիջականորեն կատարում է Աստծու հրահանգներն ու տնօրինությունները: Գաբրիել հրեշտակապետը պատկերվում է փողը ձեռքին կամ շուրթերին, իսկ ավետման դրվագներում՝ ձեռքին ճերմակ ծաղիկ բռնած:

Առավել սակավ են Ռաֆայել հրեշտակապետի մասին տեղեկությունները: Ռաֆայել անվանը տրվում է երկու բացատրություն, որոնք, ի դեպ, նույն իմաստն են արտահայտում. առաջին բացատրության համաձայն՝ Ռաֆայել նշանակում է Աստծու բժշկություն, իսկ երկրորդի՝ Աստված բժշկում է:

Ռաֆայել հրեշտակապետն Աստվածաշնչում հիշատակվում է միայն Տոբիթի երկրորդականոն գրքում (տես Տոբ. Ե 5–6), որտեղ հրեշտակապետը Տուբիայի ճամփորդության ժամանակ ընկերակցում է նրան եւ բժշկում է Տոբիթին ու Տուբիի ապագա կնոջը՝ Սառային (Տոբ. Զ 18–21, ԺԱ 13–15), նաեւ ներկայանում է որպես մարդկանց աղոթքներն Աստծուն առաքող եւ Տիրոջ գահի առջեւ Նրան աղոթքների խունկը անդադար մատուցող հրեշտակապետ (տես Տոբ. ԺԲ 12–15): Ավանդության համաձայն՝ հենց Ռաֆայել հրեշտակապետն է իջնում եւ խառնում Սիլոամի ավազանի ջրերը, որպեսզի ջրերի խառնման ժամանակ այնտեղ իջնող հիվանդները բժշկություն գտնեն (տես Հովհ. Ե 4): Այս հանգամանքով պայմանավորված՝ քրիստոնյաներս Ռաֆայել հրեշտակապետին դիմում ենք հատկապես մարմնական հիվանդություններից Աստծու կամքի համաձայն ապաքինում գտնելու խնդրանքով: Սուրբ Ռաֆայել հրեշտակապետը նաեւ ընտանիքի անդամների միջեւ սեր ու խաղաղություն հաստատելու համար պատասխանատու սպասավորն է:

Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆ

⬅ էջ 1

Իսկ ահա քրիստոնեության՝ հրեշտակներին առնչվող հարցի շուրջ ունեցած ընկալումը կարելի է ամփոփել աստվածաշնչյան այս մեկ նախադասության մեջ. «Նա Իր հրեշտակներին հոգիներ դարձրեց եւ Իր ծառաներին՝ կրակի բոց» (Եբր. Ա 7): Քրիստոնյաներիս համար ընդունելի է այն տեսակետը, ըստ որի՝ երբ մարդն աղոթում է, նրա պահապան հրեշտակն իր «պաշտպանյալի» աղոթքը տանում-բարձրացնում է երկինք եւ մատուցում Աստծուն: Պահապան հրեշտակը մարդու ուղեկիցը, պահապանն ու օգնականն է նրա ողջ կյանքի ընթացքում:

Ինչ վերաբերում է հրեշտակների սեռին, ապա նշենք, որ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի վկայության համաձայն՝ հրեշտակները եւ առհասարակ երկնային բոլոր էակները բնությամբ անսեռ են: Այդ մասին Հիսուս խոսում է մեռելների հարությանն առնչվող դրվագում՝ ասելով. «....հարության ժամանակ ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու գնում, այլ կլինեն՝ ինչպես հրեշտակները երկնքում» (Մատթ. ԻԲ 30):

Մեզ հայտնի հրեշտակապետներից յուրաքանչյուրն ունի իր անունը, որը բնութագրում է նրա ծառայությունն ու Աստծու առջեւ ունեցած դիրքը: Ուշագրավ է, որ հրեշտակապետների անուններն ունեն «էլ» վերջավորությունը, որն Աստվածաշնչում Աստծուն տրվող անվանումներից մեկն է: Մեզ հայտնի են հրեշտակապետների հետեւյալ անունները, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է նրանց որոշակի կոչմանը. Միքայել՝ «Աստվածանման, Աստծու հզոր», Գաբրիել՝ «Աստծու պատկեր», Ռաֆայել՝ «Աստծու բժշկություն», Անայել՝ «Աստծու լրում», Ուրիել՝ «Աստծու տեսություն», Դակուել՝ «Ինքն՝ աստվածային», Բարաքիել՝ «Աստվածային սկիզբ», Ադոնիել՝ «Իմ տերն Աստված է», Փանուել՝ «Աստծու հայտնություն»: Ինչպես նշում է Ս. Գրիգոր Աստվածաբանը, «....այս հրեշտակապետները մարդկանց բերում են պատգամներ՝ այդպիսով իրենց ներկայությամբ ու գործողություններով վճռականորեն փոխելով մեր կյանքը»:

Երեք ամենահայտնի հրեշտակապետներն են Միքայելը, Գաբրիելը եւ Ռաֆայելը: Միքայել հրեշտակապետը, որն Աստվածաշնչից մեզ հայտնի է որպես Աստծու ժողովրդի իշխան, Հին Կտակարանում մարտնչում է Իսրայելի թշնամիների, իսկ Նոր Կտակարանում՝ անտեսանելիորեն պայքարում Քրիստոսի Եկեղեցու հակառակորդների դեմ: Հովհաննու Հայտնության գրքում նկարագրվում են երկնքում Միքայել հրեշտակապետի պատերազմն ու հաղթանակը վիշապի՝ սատանայի, ինչպես նաեւ նրա չար գործակիցների դեմ:

Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սուրբ Գաբրիել եւ Միքայել հրեշտակապետների եւ ողջ երկնային զորքի հիշատակության տոնի առթիվ

Լույս-երկնքում ձեր անդադրում,
Հրեշտակային ձայնով բարի,
Երկնավոր Հորն օրհնաբանող
Զո՛րք լուսեղեն, անեղական,
Որ քաղցրաձայն ձեր բարբառով,
Հնչեղությամբ անլռելի
Քարոզում եք բարիք ու սեր,
Եվ բնությամբ անապական
Դուք ճախրում եք՝ միշտ դեպի վեր
Առաքելով աղոթքը մեր,
Ո՜վ բազմաչյա քերովբեներ,
Սերովբեներ դուք բազմաթեւ
Ու բազմաբյուր լո՛ւյս-հոգիներ,
Բարեխոսեք Սուրբ Արքային,
Որ թողություն Նա պարգեւի
Հոգիներին մեր բազմամեղ
Ու մեղքերին մեր բյուրաբյուր...
Եվ աղերսեք,
Ո՜վ անզնին
Զորություններ հրեշտակային,
Որ նաեւ մենք
Երեքսրբյան օրհներգությամբ
Փա՛ռքը երգենք Երրորդության,
Դուք՝ անարվեստ Գա՛հ Բարձրյալի,
Բարեկամներ դուք մարդկության
Եվ աշխարհի պահապաններ՝
Միջնորդ մահվան ու հարության,
Սո՛ւրբ Միքայել ու Գաբրիել,
Բարեխոսեք Փրկչին համայն,
Որ չլռի աղոթքը մեր,
Այլ զորությամբ աստվածանման
Թեւեր առնի ու ճախրի վեր՝
Դեպի Գահը սուրբ Բարձրյալի,
Ու բարբառով երեքսրբյան
Աստծու փառքը օրհնաբանի...

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

Միջնադարյան հայ մատենագրության որոշ հեղինակներ եւ ստեղծագործություններ իրենց ուրույն տեղն ունեն հայ աստվածաբանական, փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Այդ հեղինակներից է Դավիթ Անհաղթը, իսկ ստեղծագործություններից՝ նրա «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը:

Դավիթ Անհաղթը, հիրավի, միջնադարյան Հայաստանի գիտության հիմնասյուներից մեկն է: Առաքել Սյունեցին (ԺԴ–ԺԵ դդ.) Դավիթ Անհաղթին՝ որպես առաջին հայ մեծ փիլիսոփայի, համեմատում է Մովսես մարգարեի հետ: Դավիթ Անհաղթի կյանքի եւ գրական ժառանգության մասին վկայություններ կան թե՛ պատմիչների երկերում, թե՛ իր հեղինակած աշխատությունների նախադրություններում ու մեկնություններում, թե՛ ձեռագրերի հիշատակարաններում: Նրա կերպարն արտացոլվել է նաեւ ժողովրդական բանահյուսության մեջ: Այդուհանդերձ՝ Դավիթ Անհաղթի անձի եւ հոգեւոր ժառանգության հետ կապված բազմաթիվ հարցեր մինչ օրս մնում են չլուծված ու վիճելի: Դավիթ Անհաղթին ընդունված է համարել մեծ իմաստասեր, փիլիսոփայական երկերի հեղինակ ու թարգմանիչ, սակայն միջնադարում նա առավելապես ընկալվել է որպես փիլիսոփա-աստվածաբան եւ աղբյուրների համաձայն՝ «Անհաղթ» պատվանունն ստացել է ոչ միայն փիլիսոփայական, այլ նաեւ դավանաբանական վեճերում հաղթելու համար: Հայոց եկեղեցին Դավիթ Անհաղթին սրբադասել է ոչ միայն որպես փիլիսոփայական, այլ նաեւ աստվածաբանական երկերի՝ մասնավորապես Խաչին նվիրված ներբողի հեղինակի:

Նրա «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկն առավել հայտնի է սկսվածքի առաջին բառով՝ «Բարձրացուցէք» անվամբ: Այն շատ սիրված ու տարածված է եղել միջնադարում, ինչի վկայությունն են բազմաթիվ ընդօրինակությունները ճառընտիրներում, դավանաբանական բնույթի ժողովածուներում: «Բարձրացուցէք»-ն ընդգրկված է եղել միջնադարյան Հայաստանի վարդապետարաններում ուսուցանվող երկերի շարքում: Ականավոր տոմարագետ, փիլիսոփա եւ մատենագիր Հովհաննես Սարկավագի (ԺԱ–ԺԲ դդ.) կազմած՝ ուսումնական հաստատություններում հանձնարարելի գրականության ծրագրային ցանկում, որը մեզ է հասել Մխիթար Այրիվանեցու (ԺԳ դ.) միջոցով, Սուրբ Գրքի, Փիլոն Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Դիոնիսիոս Արեոպագացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու, Եվագր Պոնտացու, Պրոկղ Դիադոխոսի երկերի կողքին ներառված են նաեւ Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք» եւ «Սահմանք իմաստասիրութեան» երկերը: Ուշագրավ է, որ «Ներբողեան....»-ը Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի «Աղոթամատոյց»-ի եւ Հովհան Մանդակունու «Պատարագամատոյց»-ի հետ զետեղված է «Սուրբ գրեանց» մեջ՝ Նոր Կտակարանից անմիջապես հետո:

«Բարձրացուցէք»-ը մեծ ազդեցություն է ունեցել հայ դավանաբանական-աստվածաբանական մտքի վրա: Հետագա դարերի հայ մատենագիրները մեծապես օգտվել են այս երկից: «Բարձրացուցէք»-ի եւ նրա հեղինակի հանդեպ հետաքրքրությունն աճեց հատկապես ԺԲ–ԺԳ դդ., երբ ստեղծվեցին դրա առանձին «պատճառ»-ներ ու մեկնություններ:

Յոթ մասից բաղկացած սույն հոդվածաշարում կներկայացնենք Խաչին նվիրված ներբողի («Բարձրացուցէք») ստեղծման պատմաքաղաքական, հոգեւոր միջավայրը, ներբողի աստվածաբանական վերլուծությունը, դրա ազդեցությունը Խաչին նվիրված շարականների եւ ներբողների վրա (Թեոդորոս Քռթենավոր, Միսայել եպիսկոպոս, Զաքարիա Ա Զագեցի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս), հետագա դարերում ստեղծված մեկնություններն ու պատճառները (Վարդան Հաղբատացի, Դավիթ Քոբայրեցի, Ներսես Շնորհալի, Վարդան Արեւելցի):

Մաս Ա. Խաչին նվիրված ներբողի ստեղծման պատմական միջավայրը

«Բարձրացուցէք»-ի հեղինակի, ստեղծման ժամանակի եւ պատմական միջավայրի մասին հիմնական տեղեկություններն ստանում ենք ներբողի Նախադրությունից, Գյուտ Ա Արահեզացի (461–478 թթ.) կաթողիկոսի եւ Դավիթ փիլիսոփայի նամակներից: Դրանք ընդգրկված են «Տօնապատճառ» ժողովածուում՝ «Խաչի տոնի պատճառ»-ի մեջ:

Նախադրության սկզբում նախ շեշտվում են Դավիթ Անհաղթի կատարյալ հմտությունները. «Դաւիթ փիլիսոփայ ասացեալ, որ լիապէս գիտէ զտեսականն եւ զգործնականն, եւ զմասունս նոցա զերկոտասան»: Նախադրության համաձայն՝ Դավիթ Անհաղթը ծնվել է Հարք գավառի Հերեթ գյուղում: Ասվում է, որ նա Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտն է, Մովսես Քերթողահոր քրոջ որդին եւ մեկն այն վաթսուն աշակերտներից, որոնք գրերի գյուտից հետո ընտրվեցին եւ ուղարկվեցին Ալեքսանդրիա, Աթենք ու այլ քաղաքներ՝ իմաստասիրություն, արվեստախոսություն ուսանելու եւ թարգմանություններ կատարելու նպատակով: Ուսման մեկնածների մեջ Դավիթ Անհաղթի հետ հիշատակվում են Մամբրեն՝ Մովսեսի եղբայրը, Մուշեն, Եղիշեն, Եզնիկը, Արձան եւ Աղան Արծրունիները: Որոշ ժամանակ անց նրանք վերադառնում են Հայաստան: Նախադրության մեջ հիշատակվում են Հայոց Արշակունիների արքայատոհմի անկման նախօրեին եւ հետո տեղի ունեցած իրադարձությունները: Այնուհետեւ խոսվում է ներբողի գրության բուն շարժառիթի մասին. «Յաւուրս վերադիտողութեան Հայոց տեառն Գիւտայ եկին ոմանք ի նահանգէն Անտիոքայ ի գեղջէն, որ կոչի Աւշին, որոց անուանքն Կոստանդին եւ Պետրոս եւ Թէոդորէ»: Հեղինակը խիստ բացասական կերպով է նկարագրում այս անձանց արտաքինը: Ի ցույց մարդկանց՝ նրանք խոշոր հանդերձներ էին կրում, ոտաբոբիկ էին, երեսպաշտի նման պահք էին պահում, նրանց ծնկներն ու ճակատները կոշտացած էին ուղտի մաշկի պես: Անտիոքից եկած այս անձանց վարդապետությունը նույնպես տարբերվում էր ուղղափառ դավանանքից. նրանք չէին ընդունում Մարիամին՝ որպես աստվածածնի, եւ Խաչը՝ որպես Աստծու խաչ: Այսպես՝ երբ Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսը լսում է Դավթի եւ նրա ընկերների գալու մասին (հավանաբար խոսքը վերաբերում է վերջիններիս ուսումնառությունից վերադառնալուն), ուրախանում, մխիթարվում է եւ նամակով դիմում Դավիթ Անհաղթին:

Միջնադարյան հեղինակները (Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան) այս աղանդավորներին համարում են նեստորականներ: Մեծանուն գիտնականներ Մաղաքիա արք. Օրմանյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Գարեգին Ա Սարգսյանը նույնպես ընդունում են, որ վերոնշյալ անձինք նեստորականներ էին:

Ներկայացնենք Ե դարում տեղի ունեցած որոշ իրադարձություններ, որոնք կարեւոր են «Ներբողեան....»-ի ստեղծման շարժառիթն ընկալելու եւ բովանդակային վերլուծության համար: Ե դարը որոշիչ ժամանակաշրջան էր հայ ժողովրդի պատմության մեջ: Այն սկսվեց հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի՝ Հայոց գրերի գյուտով, հայ դպրության սկզբնավորմամբ եւ հայ մշակույթի Ոսկեդարի կերտմամբ: Հայոց Արշակունյաց թագավորության կորստին (428 թ.) հաջորդեց Սասանյան Պարսկաստանի Հազկերտ Բ եւ Պերոզ արքաների՝ անկախությունը կորցրած հայ ժողովրդին կրոնափոխելու, Պերոզի դեպքում՝ նաեւ դավանափոխելու քաղաքականությունը, ինչն էլ հանգեցրեց 450–451 եւ 481–484 թթ. հակապարսկական հզոր ապստամբություններին: Ե դարի երկրորդ կեսը պայքարի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովուրդը ոտքի ելավ՝ պահպանելու նախորդ տասնամյակներում ձեռք բերած արժեքները՝ ձգտելով վերականգնել քաղաքական ու կրոնական անկախությունը: «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի Հարցմունք ըստ երկաբնակացն» երկում այս ժամանակաշրջանն այսպես է բնութագրվում. «Յայսմ ժամու եղեւ միաբանութիւն երից կամարարացն առ իրեարս, Սատանայ եւ Քաղկեդոն եւ Յազկերտ»: Հայտնի է, որ Սասանյան Պարսկաստանի հակաքրիստոնեական քաղաքականությունը եւ տնտեսական ճնշումները սրվեցին հատկապես պարսից Հազկերտ Բ թագավորի (439–457 թթ.) օրոք: 450–451 թթ. սկսվեց համաժողովրդական հակապարսկական ապստամբությունը՝ «Հայոց պատերազմը», որի գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 451 թ. Ավարայրի դաշտում: Նույն՝ 451 թվականին գումարվեց Քաղկեդոնի ժողովը, որը սահմանային նշանակություն ունեցավ ոչ միայն Հայ, այլ նաեւ Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ:

Վարդանանց պատերազմից հետո Հայ եկեղեցու նկատմամբ պարսիկների հսկողությունն առավել սաստկացավ: Սասանյան Պարսկաստանը փորձում էր թուլացնել Հայ եկեղեցու ազգապահպան դերը, բաժանել Բյուզանդական եկեղեցուց եւ պահել իր վերահսկողության ներքո: Հայոց կաթողիկոսական գահին, ինչպես նաեւ եկեղեցական բարձր պաշտոններում նշանակվում էին պարսից դրածոներ: Այսպես՝ 452–456 թթ. կաթողիկոս է դառնում Մելիտե Մանազկերտացին, իսկ նրան հաջորդում է Մովսես Մանազկերտացին (456–461 թթ.): Վերջինների օրոք սկսեցին հալածվել հայ ազատագրական շարժման կողմնակիցները եւ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտները: 461 թ. Հայոց կաթողիկոս ընտրվեց նրանց կրտսեր աշակերտներից Գյուտը (461–478 թթ.), որը Տայք գավառի Արահեզ գյուղից էր՝ «լի գիտութեամբ հայովս եւ առաւելեալ յունիւն, յորդասաց բանիւ եւ առատաբուղխ վարդապետութեամբ»: Հավանաբար Պարսկաստանում տիրող խառնակ վիճակի պատճառով էր, որ Պերոզ թագավորը չմիջամտեց կաթողիկոսի ընտրությանը: Մյուս կողմից՝ Պերոզը Հայաստանում իր դիրքերն ամրապնդելու համար պաշտոններ էր տալիս իրեն հավատարիմ նախարարներին: Ղազար Փարպեցին պատմում է Գադիշո Խորխոռունու մասին, որը անհավատարմության եւ բյուզանդական իշխանության հետ գաղտնի կապեր հաստատելու համար Պերոզի առջեւ ամբաստանում է Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսին, հայ նախարարներին ու հոգեւորականներին: 471 թ. Գյուտ Ա Արահեզացին Պերոզի հրամանով կանչվում է Տիզբոն՝ պատասխան տալու Գադիշոյի՝ բյուզանդացիների հետ գաղտնի հարաբերություններ ունենալու մեղադրանքներին: Պերոզն անձամբ չի հանդիպում Գյուտ Ա կաթողիկոսին, այլ Աշտատ զորավարի որդի Յզզատվշնասպ Միհրանի միջոցով նրան է փոխանցում Գադիշոյի մեղադրանքները: Հայոց կաթողիկոսը համարձակորեն պատասխանում է վերջինիս՝ հույների հետ իր հարաբերությունները պատճառաբանելով ուսումնակից ընկերների հետ շփմամբ եւ եկեղեցական հանդերձներն այնտեղից բերելու անհրաժեշտությամբ: Պերոզը Գյուտին առաջարկում է հրովարտակով հաստատել կաթողիկոսական պաշտոնը եւ պատվով ուղարկել Հայաստան, եթե վերջինս ենթարկվի իր կամքին ու երկրպագի արեգակին, այլապես սպառնում է զրկել կաթողիկոսական աթոռից: Գյուտը պատասխանում է, որ թագավորը կարող է իրեն թույլ չտալ այլեւս հովվապետել Հայոց Եկեղեցին, դրանով ինքը կազատվի աշխարհատանջ հոգսերից եւ փոխարենը կաղոթի, իսկ եպիսկոպոսական ձեռնադրության պատիվն իրենից չեն կարող խլել ո՛չ արքաները, ո՛չ իշխանները, ո՛չ էլ նույնիսկ մահը: Կաթողիկոսը Պերոզի հրամանով արգելափակվում է Տիզբոնում. որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո վերադառնում է Հայաստան եւ առանձնանում Ոթմսում, որտեղ եւ ապրում է մինչեւ իր մահը՝ 478 թ.:

Հայկական, ինչպես նաեւ օտար աղբյուրներում վկայություններ կան Գյուտ Ա Արահեզացու կաթողիկոսության եւ Պերոզի գահակալության շրջանում Հայաստանում վերջինիս կողմից հովանավորվող նեստորականների գործունեության մասին: ➥ էջ 5

Կյանքն առանց հավատքի

«Հաւա՛տք, հաւատքն է միայն, որուն երկնային ուժին առջև լեռնանման դժուարութիւնք կը հարթուին, նոյն իսկ մահն իր աւարը ետ կուտայ, կը խորտակուի սեւ պատուարը անոր, կը պատռի մռայլ վարագոյրը կեանքին»:

Ներսէս վրդ. Դանիէլեանց

Լրջի աշխարհում գիտական առաջընթացը, տեխնոլոգիական նորագույն նվաճումները թելադրում են այլ հետաքրքրություններ եւ պահանջներ: Ակնհայտ է, որ փոխվել են արժեհամակարգերը, պատկերացումներն ու մոտեցումները, փոխվել է նաեւ հասարակության վերաբերմունքը տպագիր գրքի նկատմամբ, որին այսօր փոխարինում են էլեկտրոնային տարատեսակ կայքերը: Սակայն իրողություն է, որ տպագրության գյուտը դարձավ մարդկային մտքի հրետանին, իսկ գիրքը՝ այն անանց արժեքը, որի շնորհիվ վերապրեցինք նախորդ դարերի պատմությունը, դարձանք հոգեւոր արժեքների կրողն ու փոխանցողը: Ահա այս գիտակցումով է առաջնորդվում Հայ Եկեղեցին՝ հավատարիմ մնալով տպագիր գրքի հանդեպ ունեցած իր ավանդական վերաբերմունքին:

Մայր Աթոռի հրատարակչական բաժնի նախաձեռնությամբ 2018 թ. լույս տեսավ հայ նահատակ հոգեւորականներից մեկի՝ Ներսես վրդ. Դանիէլյանցի քարոզգիրքը (*Ներսէս վրդ. Դանիէլեանց,* Կեանքն առանց հաւատքի, Բ հրատ., կազմ.՝ Արթուր սրկ. Գէորգեան, խմբ.՝ Անդրէաս աբղ. Եզեկեան, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2018, 120 էջ):

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբան Ներսես վրդ. Դանիելյանցն այն քիչ հայտնի մտավորական-հոգեւորականներից է, որոնց ստեղծագործություններն ասես խնամքով պահված գանձեր լինեն, որոնք բացահայտելիս հոգիդ անասելի խաղաղությամբ է լցվում: Հոգեւոր սպասավորությանը զուգահեռ՝ Հայ Եկեղեցու վարդապետը ծավալել է նաեւ մանկավարժական ու գրական գործունեություն: Ներսես վրդ. Դանիելյանցի «Կեանքն առանց հաւատքի» (Վիեննա, 1903 թ.) եւ «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» (Կ. Պոլիս, 1912 թ.) քարոզգրքերը տպագրվել են դեռեւս նրա կենդանության օրոք: Թողել է նաեւ անտիպ երկեր, որոնք, կարծում ենք, մոռացության չպետք է մատնվեն: Անդրադառնանք «Կեանքն առանց հաւատքի» քարոզգրքի երկրորդ հրատարակությանը, որը հիանալի հնարավորություն է՝ ծանոթանալու մտավորական-հոգեւորականի քարոզներին, մտքերին ու գաղափարներին, տարբեր հարցերի շուրջ նրա վերլուծություններին, որոնք այժմեական են եւ ուսանելի:

Նախ նշենք, որ քարոզգրքերը խիստ տարբերվում են գիտական հրատարակություններից իրենց ձեւաչափով, բովանդակությամբ, ոճով, կիրառած լեզվական եւ մեթոդական գործիքակազմով: Տարբեր է նաեւ նպատակը. այն մարդկային հոգու անկեղծ խոսակցությունն է իր «ես»-ի, Աստծու կամ իր նմանի հետ: Այսու, քարոզգրքերը չենք կարող վերլուծել ու արժեւորել ըստ գիտական հաստատված չափորոշիչների, սկզբունքների եւ չափանիշների:

Սույն հրատարակությունը բաղկացած է «Կենսագրական ակնարկ»-ից եւ քսան քարոզից: «Կենսագրական ակնարկ»-ում (էջ 5–12)՝ գրված կազմողի կողմից, համառոտ ներկայացված են հայ հոգեւորականի կյանքն ու գործունեությունը, մեջ են բերված հատվածներ նրա հուշերից: Ներսես վրդ. Դանիելյանցը հայտնի է եղել նաեւ «Սսական Վարդ» կեղծանվամբ, որով նրան «օծել» է Մկրտիչ Ա Վանեցի (1892–1907 թթ.) հայրապետը: Նա, տարբեր ծածկանուններով, աշխատակցել է Կ. Պոլսի եւ Իզմիրի թերթերին՝ հրատարակելով չափածո ստեղծագործություններ, պատմագիտական, բարոյախրատական ու աստվածաբանական հոդվածներ: Ներսես վրդ. Դանիելյանցը մեկն էր Մեծ եղեռնի այն միլիոնավոր նահատակներից, որոնց դիերը մնացին խոր ձորերում կամ ճանապարհների վրա՝ անթաղ եւ անշիրիմ:

Նկատելի է, որ գրքում ընդգրկված քարոզները ներկայացված չեն կանխավ որոշված կարգով եւ կուռ կառուցվածքով. դրանք բովանդակային առումով փոխկապակցված չեն միմյանց ու չեն ենթարկվում ժամանակագրական հաջորդականության սկզբունքին: Այս քարոզները խոսվել են տարբեր տարիներին եւ անդրադառնում են ազգային-եկեղեցական իրադարձություններին, քրիստոնեական հավատին առնչվող տարաբնույթ հարցերին ու խնդիրներին, եկեղեցական տոներին, հոգեւոր սպասավորությանը, հայոց մշակույթին. դրանք նաեւ բացահայտում ու խարազանում են հայ հասարակության կյանքում տեղ գտած արատավոր երեւույթները: Քարոզները հեղինակի մտքի, խոհերի, մտորումների, ընկալումների, նաեւ անկեղծ մտահոգության անբասիր արտացոլանքն են: Այս մասին վկայում է նաեւ ինքը՝ Ներսես վրդ. Դանիելյանցը. *«Խօսեցայ.... ինչ որ ներշնչեցին ինձ Աւետարանի ոգին ու մեր հարց հաւատքը, գրեցի՝ ինչ որ զգացի կամ թելադրեց ինձ հայ ժողովուրդին սէրը....»* (էջ 13): Այս համառոտ քարոզներում հայ հոգեւորականի խոսքը չափազանց պատկերավոր ու գեղեցիկ է, երբեմն՝ խիստ եւ հատու:

Այսպես՝ խոսելով հայ ժողովրդի պատմական փառահեղ անցյալի մասին՝ հայ մտավորական-հոգեւորականն արտահայտում է իր մտահոգությունը՝ կապված ներկայի եւ ապագայի հետ. *«Արեւմուտքէն փչող ամէն տեսակ հովերու հանդէպ շատ լայնօրէն կը բանանք մեր սրտերն ու քսակները, ու այդ հովեր, թունաւոր օձերու պէս, անզգալի կերպով կը սողոսկին, կը մտնեն անարգել մեր բնատոհմիկ ընտանեկան դրախտէն ներս ու անցնելով իբր խորշակ մեր մատաղ սերունդի հոգիներուն եւ սրտերուն ծաղկաստանի վրայէն՝ կը խարեն, կը խամրեն անոնց բարոյական ու հայրենական սրբենի զգացումներուն ծաղիկները կենսաբոյր...»* (էջ 14): Այս կործանարար վտանգից փրկվելու համար ինչպես անցյալում, այնպես եւ այսօր պետք է կարեւորել ու արժեւորել հայ ժողովրդի գոյության երրորդությունը կազմող սրբավայրերը՝ ընտանիքը, դպրոցն ու եկեղեցին: Ազգապահպանման հոգեւոր պատերազմում կարեւորելով հայ եկեղեցականների դերակատարումը՝ Ներսես վրդ. Դանիելյանցը պնդում է, որ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել քարոզչությանը, քանզի միայն հավատով *«մարդ կրնայ ապրիլ աս վշտի կեանքը՝ ձախորդութեան մէջ անընկճելի, տառապանքներու հանդէպ մխիթարուած ու մահուան դէմ անվեհեր»* (էջ 15):

Առաջին՝ «Կեանքն առանց հաւատքի» վերնագրված քարոզում հեղինակը խոսում է գիտության եւ կրոնի մասին, անդրադառնում դրանց փոխհարաբերությանը: Ըստ այսմ՝ *«....հաւատքն ու կրօնական զգացումը հին են մարդուն չափ, յաւիտենական են կեանքին պէս»*. կյանքն առանց հավատքի, ասել է թե՝ մարդն առանց հոգու, սիրտն առանց սիրո եւ զգացմունքի (էջ 19): Իսկ գիտությունը մարդկային մտքի, իմացականության լույսն է, այն ընդլայնում է մեր մտահորիզոնը, նրա միջոցով ենք ճանաչում մեզ շրջապատող արտաքին աշխարհը: Գիտական նվաճումների շնորհիվ փոխվում են նյութական կյանքի պայմանները, բարելավվում ապրելու կերպերն ու եղանակները: Մտավորական-հոգեւորականն այստեղ իրավամբ նկատում է, որ եթե անգամ գիտությունն իր հրաշքներով ու հրաշալիքներով, իր նվաճումներով եւ առաջընթացով կատարելության գագաթնակետին էլ հասած լինի, այն չի կարող փոխարինել կրոնին ու հավատքին: Գիտությունը չի կարող սփոփել, մխիթարել երկրային կյանքից, տառապանքներից ու կենցաղային խնդիրներից հոգնաբեկ մարդ արարածին, չի կարող բժշկել նրա վիրավոր հոգին, չի կարող ցրել մահվան՝ թանձր խավարի նմանվող սարսափը: Մի՞թե *«քրիստոնէին հաւատքը չէ, որ գոցուած գերեզմանէն անդին ցոյց կու տայ բացուած յաւիտենականութեան մը դռները, ուսկից կը ցօղեն, կը կաթկթին սփոփանքի սուրբ ցօղերն անուշակ՝ մեր վշտաբեկ սրտերուն վրայ»* (էջ 20):

Հաջորդ՝ «Կեանքին արժէքը» քարոզում Հայ Եկեղեցու վարդապետը խոսում է կյանքի իմաստի մասին, իր տեսանկյունից արժեւորում մարդու ապրած տարիները, փորձառությունը: Նշենք նաեւ, որ քարոզը խոսվել է Ամանորի առիթով:

«Անոր ծնունդը» վերնագրով քարոզը նվիրված է քրիստոնեական մեծագույն տոնին՝ Սուրբ Ծննդյանը: Ըստ Ներսես վրդ. Դանիելյանցի՝ ապականված ու մեղքերի տիղմում հայտնված հեթանոսական աշխարհը մաքրագործվեց Աստծու Որդու՝ Հիսուս Քրիստոսի ծննդյամբ՝ *«Անոր ծնունդը եղաւ ծնունդն ազնիւ զգացումներու, Անոր յայտնութիւնն եղաւ յայտնութիւնը բուն ճշմարիտ կեանքին....»* (էջ 31): Քրիստոսի մարդեղությունն ու ծնունդը թերեւս աստվածային փրկագործության սկիզբն էին, երբ *«....երկինք ու երկիր զիրար կը համբուրեն սիրոյ ու սրբութեան համբոյրներով, վասնզի խաղաղութեան ու հաշտութեան աղեղն էր ձգուէր դէպ ի երկինք.... ու այլ եւս փրկուած էր մոլութեան ու մոլորութեան, ապականութեան ու պղծութեան մահացուցիչ ջրհեղեղին մէջ խեղդուելու վտանգին հասած մարդկութիւնը....»* (էջ 30):

«Սրտին խորհուրդը» քարոզում վարդապետն անդրադառնում է մարդու չար եւ բարի մտքերին ու խորհուրդներին, պատկերավոր ներկայացնում դրանց հակադրությունը: Հիմնավորելով չար խորհուրդների վտանգավորությունն ու վնասակարությունը՝ հեղինակը շեշտում է, որ *«....վատ ու ստորին խորհուրդներն են, որ կը ժանգոտեն խիղճը, կ'ապականեն սրտին մաքուր զգացողութիւնը, վերջապէս կը մթագնեն մտքին պայծառութիւնը»* (էջ 35):

Հաջորդ քարոզները բարոյախրատական բնույթ ունեն: Ներսես վրդ. Դանիելյանցն անդրադառնում է հասարակության կյանքում տեղ գտած արատավոր ու մեղսալի երեւույթներին, սովորույթներին: Հեղինակի արգահատանքի խոսքն անխտրորեն ուղղված է հասարակության բոլոր դասերի ներկայացուցիչներին՝ աշխարհական թե հոգեւորական, բարձրաստիճան պաշտոնյա թե ռամիկ: Զազրելի երեւույթների տարածման պատճառներից մեկը մարդկային անտարբերությունն է դիմացինի վշտի, սխալների, մոլորության ու անկման հանդեպ: Թեեւ Ներսես վրդ. Դանիելյանցի խոսքը խիստ է, մերկացնող, սակայն նա սեր եւ ներողամտություն է քարոզում մոլորյալների ու անկյալների նկատմամբ՝ հուսալով, որ վերջիններս դարձի կգան ու կգտնեն քրիստոնեական կյանքի ճշմարիտ ուղին: Որպես ասվածի լավագույն հաստատում՝ վարդապետը հիշեցնում է անառակ որդու մասին աստվածաշնչյան առակը:

Մեկ այլ՝ «Ներե՞լ, թէ՞ պատժել» վերնագրով քարոզում վարդապետը, զուգահեռներ անցկացնելով Հին եւ Նոր Կտակարանների միջեւ, մեկ անգամ եւս կարեւորում է ներելու կարողությունը՝ այն համարելով քրիստոնեական վարդապետության հոգեւոր զենքը. *«Քրիստոնէական կրօնի մեծութիւնն ու վսեմութիւնը՝ սիրոյ, գթութեան եւ ներման սկզբունքին մէջն է, այս երրեակ սուրբ զգացումներն են, որ մարդը կը մօտեցնեն մարդուն եւ մարդն՝ Աստուծոյ»* (էջ 70): Ներսես վրդ. Դանիելյանցը, Աստվածաշունչ մատյանը վկայակոչելով, մեկ անգամ եւս ընդգծում է, որ այն, ինչ ի զորու չեղավ իրագործելու հինկտակարանյան օրենքն իր խստությամբ ու պահանջկոտությամբ, Աստծու Որդու՝ Հիսուս Քրիստոսի քարոզած սիրո պատվիրանով իրականություն դարձավ:

Նշյալ քարոզների տրամաբանական շարունակությունն ասես լինի «Գթութեան ոգին» քարոզը, որտեղ հանգամանորեն արժեւորվում են մարդկային գթասրտությունն ու ողորմածությունը, իր նմանին օգնելու պատրաստակամությունը. *«Կեանքի հոգեկան ճգնաժամերուն մէջն է, որ գթութեան զգացումը կ'ընէ մարդը մարդուն համար հրեշտակ մը, որ կը կատարէ Աստուծոյ պաշտօնը....»* (էջ 51):

Իր խոսքն առավել ազդեցիկ եւ տպավորիչ դարձնելու համար Ներսես վրդ. Դանիելյանցը կիրառել է լեզվական տարբեր միջոցներ՝ համեմատություն, համադրում, փոխաբերություն, հակադրություն: Այսպես՝ մեկ այլ՝ «Արդարութեան եւ ճշմարտութեան ծարաւիներ» քարոզում համեմատության հրաշալի օրինակ է առկա. *«Ինչ որ է բնութեան մէջ արեւն ու իր ջերմութիւնը բուսականութեան համար՝ նոյնն է եւ աւելի արդարութիւնն ու ճշմարտութիւնը մեր բարոյական կեանքին համար....»* (էջ 112):

«Անհաւատարիմը» քարոզում Հայ Եկեղեցու վարդապետը հակադրում է հավատարմությունն ու անհավատարմությունը, վստահությունն ու անվստահությունը. պատկերավոր բազմաթիվ օրինակներով նա հիմնավորում է հավատարմության ու վստահության անփոխարինելի դերն ընտանեկան, ընկերային (սոցիալական) կյանքում՝ դրանք համարելով մարդկային հարաբերությունների եւ առնչակցությունների հիմնասյուները (էջ 53–57): ➥ էջ 7



Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

← էջ 3

Դեռեւս 430-ական թթ. Սահակ Ա Պարթեւը (387–439 թթ.) եւ Մեսրոպ Մաշտոցը, միանալով 431 թ. Եփեսոսի տիեզերաժողովի դավանությանը, անզիջում պայքար են կազմակերպում Հայաստան ներթափանցած նեստորականների դեմ: Եփեսոսի տիեզերաժողովում դատապարտված եւ Կ. Պոլսից հեռացված Նեստորը հաստատվում է Անտիոքում՝ շարունակելով գաղտնի գործունեություն ծավալել: Այսպես՝ նեստորականները, աստիճանաբար դուրս մղվելով բուն Բյուզանդական կայսրության սահմաններից, հաստատվում են արեւելյան նահանգներում՝ մասնավորապես Եդեսիայում, բայց սկսում են տարածվել գլխավորապես Պարսկաստանում: Հաշվի առնելով միջնադարյան հայ եւ օտար աղբյուրների հաղորդած տեղեկությունները՝ կարող ենք եզրակացնել, որ Ե դարի երկրորդ կեսին նեստորականությունը նոր թափ է առնում, եւ Հայ Եկեղեցին կրկին պայքար է սկսում ուղղափառ դավանության պաշտպանության համար: Հավանաբար ուղղակիորեն օգտվելով Պարսից արքայի հովանավորությունից՝ նույն շրջանում Հայաստան նեստորականներ են գալիս ոչ միայն Պարսկաստանից, այլ նաեւ Բյուզանդական կայսրության արեւելյան սահմաններից՝ Անտիոքից: Հետաքրքրական է, սակայն, որ խնդրո առարկա Նախադրության մեջ չի նշվում նեստորականների անունը, այլ միայն. «....արք ոմանք ի նահանգէն Անտիոքայ», մինչդեռ «Բարձրացուցէք»-ի «պատճառ»-ների հեղինակները (Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քոբայրեցի), ինչպես հետագայում կտեսնենք, հիշատակում են ոչ միայն նեստորականներին, այլեւ Քաղկեդոնի ժողովը:

Այսպիսով, աղբյուրների համաձայն, Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսը նամակով դիմում է Դավիթ Անհաղթին՝ խնդրելով գրել Հայ Եկեղեցու վարդապետությունը պաշտպանող մի երկ. «....խօսել խորհրդով ի խաչն Քրիստոսի» (նամակների վավերականության խնդիրն այստեղ չենք քննում): Ցույց տալու համար խաչի պաշտամունքի կարեւորությունը՝ նամակագիրն օգտվում է Պողոս առաքյալի խոսքից, թե քրիստոնյան միայն խաչով պետք է պարծենա (Գաղ. Զ 14–15. Պողոս առաքյալի այս միտքն է ընկած Խաչի աստվածաբանության հիմքում), եւ գրում. «Զի պաշտելի է մեզ եւ պատուելի եւ պանծալի ըստ Պաւղոսի պարծել ի պատուական պսակն Յիսուսի, եւ ի թագն նորոյս Սիոնի»: Նամակի վերջում նշվում է ներբողի պատվիրման հիմնական նպատակը. «....զի բարձցի հերեսիոտաց հերձուածն, եւ խլեսցի յագարակաց փուշք, եւ որոմն սատանայական սերմանց, որ ի մարդ յուսան եւ ոչ յԱստուած»: Դավիթ Անհաղթն իր պատասխան նամակում ընդունում է հայրապետի «աստվածահրաման խնդիրը»: Նա խոնարհաբար հայտնում է իր երկյուղը («սարսեալ սարսափեմ»)՝ թերագնահատելով սեփական կարողությունները («գտանի քան զկար մեր գերազանց խնդիրդ»), սակայն հանձն է առնում «աւետարանել հնազանդութեամբ»՝ հայցելով կաթողիկոսի աղոթքները, «զի Բանն Աստուած տացէ բան բանի մերոյ մասին, եւ հանճար հմտութեան Հոգին Սուրբ, խորհել խորհրդով եւ խօսել»:



Ուշագրավ ընդհանրություններ են նշմարվում նաեւ «Բարձրացուցէք»-ի եւ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի գրության ժամանակի ու հանգամանքների միջեւ: Հակապարսկական խմբավորման գլուխ կանգնած Սահակ Բագրատունու հանձնարարությամբ մոտավորապես 478 թ. Մովսես Խորենացին սկսում է գրել իր Պատմությունը: Պատմահայրը զարգացնում է «ազգ»-ի գաղափարը՝ պարզաբանելով, թե ովքեր ենք մենք, ինչ անցյալ ունենք՝ փորձելով ժամանակակից սերնդի մեջ բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը, ոգին, ինչը լիովին համապատասխանում էր հայկական պետականությունը վերականգնելու համար սկսված համաժողովրդական շարժմանը: Պարսկաստանի դեմ ուղղված այդ պայքարն անհրաժեշտ էր հզորացնել նաեւ դավանաբանական առումով: Հայոց աշխարհիկ առաջնորդը՝ Սահակ Բագրատունին, պատվիրում է Մովսես Խորենացուն գրել «Պատմութիւն Հայոց»-ը, իսկ Հայոց հոգեւոր առաջնորդ Գյուտ Ա կաթողիկոսը վերջինիս գործակից Դավիթ փիլիսոփային պատվիրում է գրել Հայ Եկեղեցու դավանանքը պաշտպանող երկ:

Այսպիսով՝ Խաչին նվիրված ներբողի Նախադրության, Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի եւ Դավիթ Անհաղթի նամակների տեղեկությունները համադրելով պատմական աղբյուրների հետ՝ կարող ենք ասել, որ այս երկը գրել է Մովսես Խորենացու ժամանակակից եւ գործակից Դավիթ փիլիսոփան՝ ընդդեմ Հայաստան ներթափանցած նեստորականների: Թեեւ պատվիրատուն Գյուտ կաթողիկոսն էր, սակայն հնարավոր է, որ Դավիթ Անհաղթն այն ավարտել է, երբ վերջինս արդեն մահացել էր, այսինքն՝ Հովհան Ա Մանդակունու (478–490 թթ.) կաթողիկոսության շրջանում: Հետեւաբար՝ «Ներբողեան....»-ի գրությունը կարելի է թվագրել 478–482 թթ. ընկած ժամանակահատվածով:

Շարունակելի

Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Լեւ Տոլստոյի հոգեհանգիստը հայկական եկեղեցիներում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շրջաբերականով

1910 թվականի նոյեմբերին թիֆլիսահայ մամուլի ամենաարծարծվող թեմաներից մեկը Լեւ Տոլստոյի մահն էր: Ռուս հանճարեղ գրողը վախճանվել էր նոյեմբերի 7-ին, եւ հայկական մամուլն օրեր շարունակ անդրադառնում էր նրա կյանքին, ստեղծագործությանը, աշխարհընկալմանը, կրոնական համոզմունքներին եւ, անշուշտ, այդ օրերին կատարվող իրադարձություններին: Հայ մամուլը, ցնցված Լեւ Տոլստոյի մահվամբ, նրան հռչակում էր «գերմարդ», «մարգարե»: Ուշագրավը, սակայն, ռուս գրողի հարաբերություններն էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ:

Հայտնի է, որ դեռեւս 1901 թվականին Ռուս Եկեղեցին բանադրել էր Լեւ Տոլստոյին կրոնական հայացքների համար եւ հեռացրել եկեղեցուց:

Նշանավոր գրողի մահից հետո, ինչպես հայտնում է Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» թերթը, Ռուս Եկեղեցու սուրբ Սինոդը մինչեւ վերջին պահը բանադրանքը վերացնելու եւ նրա թաղումն ուղղափառ ծիսակարգով կատարելու հիմքեր էր փնտրում: Սակայն Լեւ Տոլստոյի այրու հեռագիրը վերջակետ է դնում բուռն քննարկումներին. գրողն ինքը կյանքի վերջին րոպեներին վճռականապես հրաժարվել էր եկեղեցական ծեսով թաղումից: Սինոդի որոշմամբ՝ հոգեհանգիստն արգելվում է: Թաղումը լինելու էր քաղաքացիական (տես «Հորիզոն» (252), 1910, նոյեմբերի 12, էջ 2):

Այսուհանդերձ՝ ռուս մեծ գրողի հոգու հանգստության համար հնչում են աղոթքներ, եւ որքան էլ զարմանալի է՝ այլադավան Հայ Եկեղեցում: Նման ցանկություն էին հայտնել Լեւ Տոլստոյի մեծությունը գնահատող ռուսաստանաբնակ հայ մտավորականներն ու լիբերալ գաղափարներով տարված հայ ուսանողությունը:

Լեւ Տոլստոյի մահվան հետ կապված այս դրվագին անդրադարձել է ինչպես ժամանակի հայ, այնպես եւ ռուսական մամուլը:

Թիֆլիսահայ լրագրերից քաղված տեղեկությունների համաձայն՝ առաջին հոգեհանգիստը Մոսկվայի հայկական եկեղեցում կատարվում է նոյեմբերի 7-ի առավոտյան՝ գրողի մահվան գույժն ստանալուց ժամեր անց, ըստ «Սուրհանդակ»-ի՝ «հայկական գաղութի ձեռներեցությամբ» (տես «Սուրհանդակ» (178), 1910):

«Կայծեր»-ն այս մասին մանրամասնում է. «Գործակալին դիմել են հոգեհանգիստ կատարելու գրչի մեծ վարպետի համար, քահանան երկարատեւ տատանումներից յետոյ է միայն համաձայնուել» (տես «Կայծեր», 1910, 14 նոյեմբերի):

Հաջորդ օրը, ինչպես ժամանակի մամուլն է փաստում, հոգեհանգստի կարգ է կատարվում նաեւ Սանկտ Պետերբուրգի, հետո՝ Ռուսաստանի հայաբնակ այլ վայրերի հայկական եկեղեցիներում, իսկ որ ամենաուշագրավն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական՝ «Արարատ» ամսագրում այս մասին որեւէ հրապարակում չկա:

Տեղեկությունը հաղորդում է «Տարազ»-ը. «Հայոց կաթողիկոսը շրջաբերական հեռագրով բոլոր թեմերի առաջնորդներին պատուիրեց ամենուրեք անարգել կատարել հոգեհանգիստ: Հայ դպրոցը, ընկերութիւնները առանց բացառութեան յարգանք մատուցեցին Գերմարդուն» («Տարազ» 1910, նոյեմբեր):

Թիֆլիսի մեկ այլ՝ «Կայծեր» լրագրից տեղեկանում ենք նաեւ, որ Հայոց հայրապետը նման հրաման է արձակել ի պատասխան Աստրախանի թեմական առաջնորդի դիմումի (տես «Կայծեր», 1910, 23 նոյեմբերի):

Նկատենք, որ այդ ժամանակ Հայ Եկեղեցին հովվապետում էր Մատթեոս Բ Իզմիրլյանը (1908–1910 թթ.), որն իր մահկանացուն էր կնքելու նույն թվականի դեկտեմբերին:

Հայտնի չէ Ռուս Եկեղեցու ո՛չ հրապարակային եւ ո՛չ էլ հետնաբեմային որեւէ արձագանք Հայ Եկեղեցու այս քայլին: Իսկ Ռուսական կայսրությանն այդ ամենը հետաքրքրում էր այնքանով, որքանով Լեւ Տոլստոյի մահը եւ մասնավորապես նոյեմբերի 8-ին Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե հայկական եկեղեցում կատարված հոգեհանգստյան արարողությունն առիթ էին դարձել ուսանողական համընդհանուր հուզումների:

Այսպես՝ Սանկտ Պետերբուրգի պահնորդական բաժանմունքի ղեկավար գնդապետ ֆոն Կոտենը Ռուսական կայսրության ներքին գործերի նախարար Ստոլիպինին ուղղված զեկուցագրում նշում է, որ Լեւ Տոլստոյի՝ Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցում տեղի ունեցած հոգեհանգստի արարողության լուրն ակնթարթորեն տարածվել է մայրաքաղաքի ուսանողության շրջանում, եւ մինչ աղոթողները՝ շուրջ 200 հոգի, կհասցնեին ցրվել, եկեղեցին լցվել է համալսարանականներով եւ ուսանողուհիներով: Հայ հոգեւորականները համաձայնել են կրկնել արարողությունը եւս մեկ անգամ եկեղեցում եւ դրանից դուրս գտնվող հազարավոր աղոթողների համար:

Այս երկրորդ հոգեհանգստից հետո Նեւսկու փողոցում սկիզբ առած ուսանողական ցույցին անդրադառնում է նաեւ ռուսական եւ թիֆլիսահայ մամուլը: ➥ էջ 8

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 19–21

Նամակ իններորդ
ԵՐԲ Է ՊԵՏՔ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ

Պետք է վիրավորվել միայն այն ժամանակ, երբ ցանկանում են ձեզ վիրավորել: Եթե չեն ցանկանում, իսկ վիրավորանքի պատճառը պատահականությունն է, ապա ինչո՞ւ վիրավորվել:

Առանց զայրանալու պարզաբանել թյուրիմացությունը, եւ վերջ:

Դե, իսկ եթե ցանկանո՞ւմ են վիրավորել: Նախքան վիրավորանքին վիրավորանքով պատասխանելը արժե մտածել. պե՞տք է արդյոք իջնել վիրավորանքի աստիճանի: Չէ՞ որ վիրավորանքը սովորաբար ինչ-որ ցածր տեղում է գտնվում, եւ այն բարձրացնելու համար անհրաժեշտ է դրա աստիճանի խոնարհվել:

Եթե այնուամենայնիվ վճռել եք վիրավորվել, ապա նախ կատարեք մաթեմատիկական ինչ-որ գործողություն՝ հանում, բաժանում եւ այլն: Ենթադրենք՝ ձեզ վիրավորել են մի բանի համար, որում դուք միայն մասամբ եք մեղավոր: Ձեր վիրավորանքի զգացումից հանեք այն ամենը, ինչը ձեզ չի վերաբերում: Ենթադրենք, որ ձեզ վիրավորել են՝ վեհ մղումներից ելնելով. ձեր զգացումը բաժանեք վիրավորական դիտողություն առաջ բերած վեհ մղումների վրա եւ այլն: Մտքում կատարելով մաթեմատիկական անհրաժեշտ ինչ-որ գործողություն՝ կկարողանաք վիրավորանքին մեծ արժանապատվությամբ պատասխանել, ինչն այնքան վեհ կլինի, որքան քիչ նշանակություն կտաք վիրավորանքին. որոշակի սահմաններում, իհարկե:

Ընդհանուր առմամբ չափից ավելի վիրավորվողությունը խելքի պակասի կամ ինչ-որ բարդույթավորվածության նշան է: Եղեք խելացի:

Անգլիական լավ վարքականոն կա. վիրավորվել միայն այն ժամանակ, երբ ձեզ ցանկանում են վիրավորել. դիտավորյալ են վիրավորում: Պարզ անուշադրության, մոռացկոտության համար (երբեմն տվյալ մարդուն բնորոշ տարիքի, հոգեբանական ինչ-ինչ թերությունների պատճառով) պետք չէ նեղանալ: Ընդհակառակը՝ այդպիսի «մոռացկոտ» մարդու նկատմամբ առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերեք. դա կլինի գեղեցիկ եւ վեհանձն:

Սա այն դեպքում, երբ ձեզ «վիրավորում» են, իսկ ինչպե՞ս վարվել, երբ դուք ինքներդ կարող եք վիրավորել մեկ ուրիշին: Վիրավորվող մարդկանց նկատմամբ անհրաժեշտ է հատկապես ուշադիր լինել: Չէ՞ որ վիրավորվողությունը բնավորության խիստ տանջալից գիծ է:

Նամակ տասներորդ
ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԿԵՂԾ ՊԱՏԻՎ

Ես չեմ սիրում սահմանումներ եւ հաճախ պատրաստ չեմ դրանց: Սակայն կարող եմ մատնանշել խղճի եւ պատվի միջեւ առկա որոշ տարբերություններ:

Խղճի եւ պատվի միջեւ կա մեկ էական տարբերություն: Խիղճը միշտ հոգու խորքից է բխում, եւ խղճով այս կամ այն չափով մաքրագործվում են: Խիղճը «տանջում է»: Խիղճը չի լինում կեղծ: Այն լինում է խլացված կամ խիստ չափազանցված (շատ հազվադեպ): Սակայն պատվի վերաբերյալ պատկերացումները լինում են լիովին կեղծ, եւ այդ կեղծ պատկերացումներն ահռելի վնաս են հասցնում հասարակությանը: Նկատի ունեմ այն, ինչ կոչվում է «համազգեստի պատիվ»: Մեզանում կորել է մեր հասարակությանը ոչ բնորոշ այնպիսի մի երեւույթ, ինչպիսին «ազնվական պատիվ» հասկացությունն է, սակայն «համազգեստի պատիվը» մնում է ծանր բեռ: Կարծես մարդը մահացել է, եւ մնացել է միայն համազգեստը, որի վրայից հանվել են շքանշանները, եւ որի տակ այլեւս չի բաբախում խղճմիտ սիրտը:

«Համազգեստի պատիվը» ստիպում է ղեկավարներին պաշտպանել կեղծ կամ արատավոր նախագծեր, պնդել շարունակելու ակնհայտ անհաջող շինարարությունները, պայքարել հուշարձանները պաշտպանող ընկերակցությունների դեմ («մեր շինարարությունն առավել կարեւոր է») եւ այլն: Կարելի է բերել «համազգեստի պատվի» նման պաշտպանման բազմաթիվ օրինակներ:

Իրական պատիվը միշտ խղճի հետ ներդաշնակ է լինում: Կեղծ պատիվը մտապատրանք է անապատում՝ մարդկային (ավելի ճիշտ՝ «չինովնիկական») հոգու բարոյական անապատում:

Նամակ տասնմեկերորդ
ՊԱՇՏՈՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդն իր ծննդյան առաջին իսկ օրվանից զարգանում է: Նա ձգտում է դեպի ապագա: Նա ուսանում է, սովորում է իր առջեւ նոր խնդիրներ դնել՝ նույնիսկ այդ չգիտակցելով: Եվ որքա՜ն արագ է տիրապետում իր դիրքին կյանքում: Արդեն իսկ կարողանում է գդալ բռնել եւ առաջին բառերն արտասանել:

Այնուհետեւ երեխա եւ պատանի ժամանակ նույնպես սովորում է:

Եվ արդեն գալիս է սեփական գիտելիքները կիրառելու ժամանակը՝ հասնելու նրան, ինչին ձգտում էր: Հասունություն: Պետք է ներկայով ապրել...

Բայց թափառքը պահպանվում է, եւ ահա սովորելու փոխարեն շատերի համար գալիս է կյանքում դիրք գրավելու ժամանակը: Շարժումը շարունակվում է սովորության ուժով: Մարդն անընդհատ ձգտում է դեպի ապագա, իսկ ապագան այլեւս իրական գիտելիքները չեն, ոչ էլ հմտությունների տիրապետումը, այլ՝ սեփական անձը շահեկանորեն դիրքավորելը: Բովանդակությունը՝ իսկական բովանդակությունը, կորսված է: Ներկա ժամանակը չի գալիս, դեռեւս մնում է դեպի ապագա դատարկ ձգտումը: Այդ իսկ է պաշտոնամոլությունը: Ներքին անհանգստություն, որը մարդուն դարձնում է անձնապես դժբախտ եւ շրջապատողների համար անտանելի:

Նամակ տասներկուերորդ
ՄԱՐԴ ՊԵՏՔ Է ԿԻՐԹ ԼԻՆԻ

Մարդը պե՞տք է կիրթ լինի: Իսկ եթե նրա մասնագիտությունը չի պահանջում կիրթ լինե՞լ: Իսկ եթե նա չի կարողացել կրթություն ստանա՞լ. այդպես են դասավորվել հանգամանքները: Իսկ եթե շրջապատող միջավայրը թույլ չի տալի՞ս: Իսկ եթե կիրթ լինելը նրան կդարձնի «սպիտակ ագռավ» իր գործընկերների, ընկերների, հարազատների շրջանում, պարզապես կխանգարի այլ մարդկանց հետ նրա մերձեցմա՞նը:

Ո՛չ, ո՛չ եւ ո՛չ: Կիրթ լինելն անհրաժեշտ է բոլոր հանգամանքներում: Դա պետք է եւ շրջապատողներին, եւ հենց մարդուն:

Դա շատ, շատ կարեւոր է եւ ամենից առաջ՝ երջանիկ ու երկար ապրելու համար, այո՛, երկար: Քանի որ կիրթ լինելը հավասար է բարոյական առողջությանը, իսկ առողջությունը հարկավոր է երկար ապրելու համար՝ ոչ միայն մարմնապես, այլ նաեւ մտավորապես: Աստվածաշնչում ասված է. «Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, եւ երկրի վրա կյանքդ երկար լինի» (Եփ. Զ 2–3, հմմտ. Ելք Ի 12): Դա վերաբերում է ինչպես ողջ ժողովրդին, այնպես եւ առանձին մարդուն: Դա իմաստուն է:

Սակայն ամենից առաջ որոշենք, թե ինչ է կիրթ լինելը, իսկ հետո՝ ինչու է այն կապված երկարակեցության պատվիրանի հետ:

Շատերը մտածում են՝ կիրթ մարդը նա է, ով շատ է կարդացել, լավ կրթություն է ստացել (եւ նույնիսկ գերազանցապես հումանիտար), շատ է ճանապարհորդել, մի քանի լեզու գիտի:

Միեւնույն ժամանակ կարելի է ունենալ այս ամենը եւ լինել ոչ կիրթ, եւ կարելի է մեծավ մասամբ այս ամենից որեւէ բան չունենալ, սակայն այնուամենայնիվ լինել ներքնապես կիրթ մարդ:

Կրթվածությունը չի կարելի շփոթել կիրթ լինելու հետ: Կրթվածությունն ապրում է հին բովանդակությամբ, կիրթ լինելը՝ նորի ստեղծմամբ, եւ հնի՝ որպես նորի գիտակցմամբ:

Ավելին... Զրկեք իրապես կիրթ մարդուն իր ողջ գիտելիքներից, կրթվածությունից, զրկեք նրան հենց հիշողությունից: Թող նա մոռացած լինի ամեն բան աշխարհում, չիմանա գրականության դասականներին, չհիշի արվեստի մեծագույն գործերը, մոռանա պատմական կարեւոր իրադարձությունները, բայց եթե, այս ամենով հանդերձ, պահպանի մտավոր արժեքների նկատմամբ ընկալունակությունը, գիտելիք ձեռք բերելու սերը, պատմության նկատմամբ հետաքրքրությունը, գեղագիտական հոտառությունը, կարողանա տարբերել արվեստի իրական գործը կոպիտ «բանից»՝ ստեղծված միայն զարմացնելու համար, եթե կարողանա հիանալ բնության գեղեցկությամբ, հասկանա այլ մարդու բնավորությունն ու անհատականությունը, մտնի նրա դրության մեջ եւ հասկանալով ուրիշին՝ օգնի նրան, չդրսեւորի կոպտություն, անտարբերություն, չարախնդություն, նախանձ, այլ ըստ արժանվույն գնահատի նրան, եթե հարգանք դրսեւորի անցյալի մշակույթի նկատմամբ, դաստիարակված մարդու հմտություններ, պատասխանատվություն՝ բարոյական հարցեր լուծելիս, հարստությունն ու ճշգրտությունն իր լեզվի՝ խոսակցական եւ գրավոր, ահա հենց նա է կիրթ մարդը:

Կիրթ լինելը ոչ միայն գիտելիքներ ունենալն է, այլ նաեւ ուրիշին հասկանալու ունակությունը: Այն դրսեւորվում է հազար ու հազար մանրուքներում. հարգալից վիճաբանելու, սեղանի շուրջ համեստ պահելու կարողությամբ, ուրիշին աննկատ (հենց աննկատ) օգնելու, բնությունը պահպանելու, շուրջբոլորը չաղտոտելու՝ ծխախոտի մնացորդներով կամ հայհոյանքներով, վատ գաղափարներով (դա նույնպես աղբ է, այն էլ ինչպիսի) չաղտոտելու ունակությամբ:

Ես ճանաչում էի ռուսական Հյուսիսում բնակվող գյուղացիների, որոնք իսկապես կիրթ էին: Նրանք զարմանալի մաքրություն էին պահպանում իրենց տներում, գիտեին գնահատել լավ երգերը, կարողանում էին պատմել «իրապատումներ» (այսինքն՝ ինչ պատահել էր իրենց կամ ուրիշների հետ), ապրում էին կանոնակարգված կենցաղով, հյուրասեր էին ու սիրալիր, ըմբռնումով էին վերաբերվում ուրիշի եւ վշտին, եւ ուրախությանը:

Կիրթ լինելը հասկանալու, ընկալելու կարողությունն է, հանդուրժող վերաբերմունքն է աշխարհի եւ մարդկանց նկատմամբ:

Կիրթ լինելը պետք է սեփական անձի մեջ զարգացնել, մարզել՝ մարզել հոգեկան ուժերը, ինչպես մարզում են մարմնականը: Իսկ մարզումը հնարավոր եւ անհրաժեշտ է ցանկացած պայմաններում:

Այն, որ մարմնական ուժի մարզումը նպաստում է երկարակեցությանը, հասկանալի է: Շատ ավելի քիչ են ընկալում, որ երկարակեցության համար անհրաժեշտ է նաեւ հոգեւոր ու հոգեկան ուժերի մարզումը:

Բանն այն է, որ շրջապատի նկատմամբ թշնամական եւ չար վերաբերմունքը, ուրիշների հանդեպ կոպտությունն ու անհասկացողությունը՝ հոգեկան եւ հոգեւոր թուլության, մարդու ապրելու անկարողության նշաններ են... Հրմշտում է լեփ-լեցուն ավտոբուսի մեջ թույլ եւ նյարդային մարդը՝ ուժասպառ, ամեն ինչին սխալ արձագանքող: Հարեւանների հետ վիճում է նույնպես ապրել չիմացող, հոգեպես խուլ մարդը: Գեղագիտորեն անընմբռնողունակը նույնպես դժբախտ մարդն է: Ուրիշին չհասկացող մարդը՝ նրան միայն չար նպատակներ վերագրող, միշտ բոլորից նեղացող, նույնպես իր կյանքն աղքատացնող եւ ուրիշներին ապրել խանգարող մարդն է: Հոգեկան թուլությունը հանգեցնում է մարմնական թուլության: Ես բժիշկ չեմ, սակայն դրանում համոզված եմ: Երկարամյա փորձառությունն ինձ համոզել է:

Սիրալիրությունն ու բարությունը մարդուն դարձնում են ոչ միայն մարմնապես առողջ, այլ նաեւ գեղեցիկ: Այո՛, հենց գեղեցիկ:

Չայրույթից աղավաղված մարդու դեմքը դառնում է այլանդակ, իսկ չար մարդու շարժումները զուրկ են նրբագեղությունից՝ ոչ թե շինծու նրբագեղությունից, այլ բնական, որը շատ ավելի թանկ է:

Մարդու հասարակական պարտավորությունը կիրթ լինելն է: Դա պարտավորություն է նաեւ սեփական անձի նկատմամբ: Դա նրա անձնական երջանկության եւ նրան շրջապատող ու առ նա (այսինքն՝ նրան ուղղված) «բարյացկամության աուրայի» գրավականն է:

Այն ամենը, ինչի մասին զրուցում եմ երիտասարդ ընթերցողների հետ այս գրքում, կիրթ լինելու, մարմնական ու բարոյական առողջության, առողջության գեղեցկության կոչ է: Լինենք երկարակյաց՝ որպես մարդիկ եւ որպես ժողովուրդ: Իսկ հոր եւ մոր նկատմամբ հարգանքն անհրաժեշտ է լայն իմաստով ընկալել՝ որպես հարգանք անցյալի մեր ողջ լավագույնի նկատմամբ, անցյալի, որը հայրն ու մայրն է մեր այժմեականության՝ մեծ այժմեականության, որին պատկանելը մեծ երջանկություն է:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի (Կանաչ ժամ)

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամ), համաձայն շինարարական արձանագրության, կառուցվել է 1818 թվականին Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշի քաղաքում՝ նախկին Ղարաբաղցվոց փայտաշեն եկեղեցու տեղում (տե՛ս *Շահեն Մկրտչյան,* Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1988, էջ 227)։ Եկեղեցու պատի մեջ տեղադրված է նախկին եկեղեցու արձանագրությունը։ Այն առավել հայտնի է հետեւյալ անվանումներով՝ Ղարաբաղցվոց եկեղեցի՝ իբրեւ ակնարկ Շուշիի այն բնակիչների, որոնց միջոցներով կառուցվել է, Կանաչ ժամ՝ այն պատճառով, որ դրա գմբեթները ներկված էին կանաչ գույնով, նաեւ Վերին կամ Նոր թաղի եկեղեցի՝ այն թաղամասի անունով, որը կառուցապատվել է խանական լուծը թոթափելուց անմիջապես հետո։ Նշանավոր այս եկեղեցին, որը գրեթե անեղծ պահպանվել էր, գտնվում է սարահարթի բարձրադիր՝ արեւմտյան հատվածում, որտեղից երեւում է քաղաքի ամբողջ համայնապատկերը (տե՛ս *Շահեն Մկրտչյան,* նշվ. աշխ., էջ 360)։ Եկեղեցին կառուցված է արեւելք–արեւմուտք առանցքով՝ խաչաձեւ հատակագծով։ Կողային ավանդատները բեմի տակ իջեցնելու հետեւանքով արտաքին՝ արեւելյան ճակատապատը կիսակլոր է։ Եկեղեցին ու զանգակատունն աչքի են ընկնում ներքին յուրօրինակ հարդարանքով։ Այս հանգամանքը հուշարձանն առանձնացնում է հայ ճարտարապետական համանման կառույցների շարքում։ Եկեղեցուն արեւմուտքից կցված է հետագայում կառուցված գմբեթավոր զանգակատունը, որի մուտքի վերնամասում փորագրված է. «Բաբայն Ստեփանեան Յովնանենց՝ ի յիշատակ հանգուցեալ եղ[բօր] իւրեանց Մկրտչին, 1847 թվին» արձանագրությունը։ Թեեւ զանգակատունը, ըստ էության, ձուլված է եկեղեցուն, այնուամենայնիվ, որմնամույթերով որոշ չափով առանձնացված է։ Դրանով առավել է ընդգծվում դեպի աղոթասրահ տանող շքամուտքի հանդիսավորությունը։ Եկեղեցին եւս որմնամույթերով բաժանված է երկու սրահի։ Առաջին՝ քառակուսուն մոտ հատակագծով սրահն ունի երդիկավոր գլխատներին հատուկ գոցվող թաղ, իսկ երկրորդ՝ ուղղանկյուն սրահի շքեղ, սրբատաշ որմնամույթերի վրա բարձրանում է շրջանաձեւ գմբեթը։ Եկեղեցու աղոթասրահը, ինչպես երեւում է կառույցի արտաքին գոտկաքիվից եւ զանգակատան մուտքի աստիճաններից, շուրջ երկու մետր բարձր է բակի մակարդակից։ Ուշագրավ են Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գոցվող թաղերը, հայկական եկեղեցիների գմբեթների համար անսովոր որոշ տարրերը՝ անհամեմատ մեծ բացվածքները, բեմատակն իջեցված ավանդատները, արեւելյան կիսակլոր ճակատապատը։ Գմբեթների ճարտարապետական նորամուծությունները նույնպես հարստացրել եւ առավել նշանակալի են դարձրել եկեղեցու գեղարվեստական արժանիքը։ Եթե դրան ավելացվի բարձր, կանաչապատ տեղանքը, սրբատաշ եւ կոպտատաշ քարերից խնամքով կանգնեցված եկեղեցու կաթնագույն տեսքը, ապա դժվար չէ կռահել, որ հուշարձանն ունի քաղաքաշինական տեսանկյունից որոշակի կազմակերպող դեր։ Շնորհիվ կուռ, վերեւ ձգված գմբեթի ու զանգակատան՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին լավ է դիտվում քաղաքի բնակելի՝ գրեթե բոլոր թաղամասերից։ Այդ հանգամանքն իր որոշակի ազդեցությունն է թողել պաշտամունքային կառուցվածքի վրա՝ թելադրելով եկեղեցու եւ զանգակատան հստակ ուրվագծվող գմբեթային լուծում (տե՛ս *Շահեն Մկրտչյան,* նշվ. աշխ., էջ 356)։ Ադրբեջանցիների վարչակարգի վերջին տարիներին եկեղեցին վերածվել էր հանքային ջրերի ըմպելասրահի։ Շուշիի՝ 1992 թ. հերոսական ազատագրումից հետո եկեղեցին վերադարձվեց իր իրական տերերին՝ արցախցիներին։ Այնտեղ վերականգնողական աշխատանքներ կատարվեցին, եւ 1995 թ. մայիսին Գարեգին Ա կաթողիկոսի (1995–1999 թթ.) մասնակցությամբ անցկացվեց ժամերգություն (տե՛ս *Շահեն Մկրտչյան,* Շուշի. Ողբերգական ճակատագրի քաղաքը, Երեւան, 2008, էջ 241)։

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին 2020 թվականի հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմից հետո ադրբեջանական զինված ուժերի կողմից բարբարոսաբար ավերվել է։ Քանդվել են եկեղեցու գմբեթն ու զանգակատունը, եւ այն վերջնական ոչնչացումից փրկելու որեւէ երաշխիք չկա։ Քաղաքակրթության ծիրից անդին մնացած ադրբեջանցիները՝ իրենց իշխանությունների անմիջական հովանավորչությամբ, բացահայտ խախտում են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերը։ Այսպես՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 75-րդ նիստի՝ 2020 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված բանաձեւում շեշտվում է.

«9. Այնուհետեւ կոչ է անում բոլոր պետություններին միջոցներ ձեռնարկել եւ ռազմավարություն մշակել՝ ուղղված պաշտամունքային եւ կրոնական վայրերի, գերեզմանատների ու սրբավայրերի նկատմամբ բացարձակ հարգանքի խրախուսմանն ու դրանց պահպանմանը, եւ

ձեռնարկել պաշտպանական միջոցներ այն դեպքերում, երբ դրանք ենթակա են բարբարոսության (վանդալիզմի) կամ ոչնչացման վտանգին» (*Տ. Արարատ քհն. Պողոսյան, Արփինե Չանթիկյան,* Հաշտությունն, թե՞ ուրացում, «Էջմիածին», 2021, Դ, էջ 121–122)։

Անտեսելով միջազգային իրավական բոլոր փաստաթղթերն ու համաձայնագրերը՝ ադրբեջանցիները պատերազմի ընթացքում եւ դրա թվացյալ «ավարտից» հետո պղծում, անարգում կամ հիմնահատակ քանդում են հայկական սրբավայրերը, վանքերն ու եկեղեցիները, գերեզմանատները, մշակութային կոթողներն ու հուշարձանները։

Էմմա ՂԱԶԱՐՅԱՆ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան

Կյանքն առանց հավատքի

➥ էջ 4

Ներսես վրդ. Դանիելյանցն ընդգծում է. *«Եթէ կայ աշխարհի վրայ սուրբ ուրախութիւն, ճշմարիտ երջանկութիւն մը, հոգ չէ, որ ան քանի մը օր կամ քանի մը ժամ տեւած ըլլայ, այն միայն անոնք կ՚ըզգան, որոնց սիրտը կապուած է հաւատարմութեան ու վստահութեան սիրոյ օղակապերովը, որուն բնա՛ւ չեն կրնար վնասել նախանձի կամ կասկածանքի ժանգերը ժահրոտ»* (էջ 56)։

«Հացին համար ի՞նչ կ՚ընենք» քարոզում խարազանվում են մարդկային արատները՝ նյութապաշտությունը, անազնվությունը, ստախոսությունը, ագահությունը։ Հեղինակը սրտի ցավով նկատում է, որ *«.... մարդ ամէն բան նիւթականացուց նիւթին համար ու անոր շուրջը կամ դիմացը իր խիղճը խիճ դարձաւ, հոգին ալ՝ մարմին, որ բնազդով սկսաւ գործել, քան բանականութեամբ....»* (էջ 65)։ Ագահների մասին ասվում է, որ նրանց կյանքը, ըստ էության, ունայն է, հոգեւոր որեւէ արժեքից զուրկ, քանզի *«խարդախութեամբ դիզուած ոսկիներուն փայլն իրենց կեանքին արեւն ըրին կամ կուռքը՝ իրենց կոյր հոգիին....»* (էջ 66)։ Նշենք նաեւ, որ Ներսես վրդ. Դանիելյանցի բարոյական-աստվածաբանական շեշտադրումները հետաքրքիր են եւ յուրօրինակ. դրանք ասես մի քանի շերտ ունեն, որոնք ընթերցողը պետք է բացահայտի։

«Սրտին ծաղկազարդը» քարոզում Ներսես վրդ. Դանիելյանցը շատ գեղեցիկ զուգահեռներ է անցկացնում բնության զարթոնքի, ծաղկունքի եւ մարդու հոգեւոր նորոգման, ներքին մաքրագործման միջեւ։ Նա հարցնում է քրիստոնյային, որը բոլոր հավատացյալների հավաքական կերպարն է. *«....ի՞նչ կ՚արժէ բնութեան եւ Աստուծոյ տաճարին ծաղկազարդուիլն ու փոփոխութիւնները, մինչ դու չես զգար փոփոխութիւն մը քու մէջդ հոգեպէս, եւ սիրտդ իբր ամայի անապատ մը կը մնայ թափուր, ուր չճառագայթէր, չցոլանար սէրը սրբացնող ու աստուածացնող....»* (էջ 86)։

«Վերջին սեղանը» քարոզում նկարագրելով վերջին ընթրիքը՝ վարդապետը խոսում է սիրո պատվիրանի նոր՝ նորկտակարանյան բովանդակության մասին, որն ավանդվեց մարդկության Փրկչի կողմից։ Այս սիրո վրա է կառուցվել քրիստոնեական Եկեղեցին (խոսքը հոգեւոր համայնքի մասին է), որը հիմնադրման սկզբնական շրջանում սոսկալի հալածանքների ենթարկվեց, աննկարագրելի հարվածներ ու տառապանք կրեց, սակայն անսասան եւ կանգուն մնաց. *«Այն (Եկեղեցին) կը նմանի ծովափունքի հաստատ ժայռին, զոր կատաղի ծովին ալիքները շարունակ կ՚ապտակեն ու կը հարուածեն, բայց ժայռը աւելի կը փայլի, աւելի կը յղկուի այդ ալիքներէն....»* (էջ 91)։

«Ահաւոր գիշերը» քարոզում Ներսես վրդ. Դանիելյանցը չափազանց պատկերավոր եւ տպավորիչ է նկարագրում Հիսուս Քրիստոսի խաչելությանը նախորդող իրադարձությունները։ Նախ՝ ներկայացնում է ահասարսուռ տագնապի, անասելի երկյուղի եւ սպասումի այն գիշերը, որը պետք է փոխեր մարդկության ողջ պատմության ընթացքն ու իր անջնջելի հետքը թողներ. *«Տագնապներուդ (իմա՛ Յիսուս Քրիստոսի) ահաւոր գիշերը ծնաւ կեանք մը մարդուն համար, որ այլ եւս չվախնար մահուան գիշերներէն. գերեզմանդ անմահութեան դուռը բացաւ....»* (էջ 98)։ Քրիստոսի չարչարանքներով եւ խաչելությամբ իր լրումին հասավ փրկագործության խորհուրդը։ Ըստ Հայ Եկեղեցու վարդապետի՝ Աստծու Որդին եղավ լույսը մեր մտքի, անմահությունը մեր կյանքի, սերը մեր սրտի եւ ճշմարտությունը մեր հոգու։ Նրա մահվան ահավոր գիշերը մեզ՝ մահկանացուներիս համար ծնեց անմահության առավոտը (էջ 98)։

Նախորդին բովանդակային առումով շարունակում է «Մա՞հ, թէ՞ կեանք» քարոզը՝ խոսված Սուրբ Հարության տոնին։ Ներսես վրդ. Դանիելյանցը շեշտում է՝ Քրիստոս Իր հարությամբ հաստատեց, որ մարդու համար մահ չկա. Նրա մահով *«....մահուան գաղտնիքը լուծուեցաւ, մահը կեանք ծնաւ, մինչ՝ առաջ կեանքն էր, որ մահ կը ծնէր մարդուն համար....»* (էջ 101)։ Եվ, հիրավի, Աստծու Որդու հարությամբ մահվան պատանքը փոխակերպվեց անմահության պատմուճանի, իսկ գերեզմանի մթին անդունդը դարձավ հավիտենական կյանքի ճանապարհը։ Կյանքի ճշմարիտ օրինակը մեզ հայտնվեց Քրիստոսի երկրային կյանքով, իսկ Նրա մահվամբ ու հարությամբ լուծվեց գաղտնիքը մահվան, որի խայթոցից առաջացած արյունոտված վերքերը բուժվեցին, սպիացան Փրկչի վերքերից կաթկթացող արյան ցողերով (էջ 118)։

Մեկ անգամ եւս արժեւորելով Աստվածաշունչն ու համեմատելով մյուս գրքերի հետ՝ Ներսես վրդ. Դանիելյանցն այն համարում է քրիստոնյայի կյանքի գիրքը, սրտի նվիրական մատյանը եւ հոգու անբիծ հայելին։ Աստվածաշունչ մատյանն անանց գանձ է, որը չի ենթարկվում ժամանակի «սպառնալիքին»։ Վարդապետը գրում է. *«Աւետարանն այն մաքուր ու սուրբ գետակն է, ուր մարդ աշխարհի կենցաղին մէջ աղտոտած կեանքին բիծն ու աղտերը կը լուայ. ան տրտմածներուն մխիթարանքն է, տառապեալներուն՝ սփոփանքը, խթան մը՝ սուտ իմաստուն կարծուածներուն բրտացած զգացումներուն, խաւարամիտներուն՝ լոյսը....»* (էջ 106–107)։

Այս հրատարակության մեջ ընդգրկված քարոզներն ունեն աստվածաբանական, բարոյախրատական բնույթ։ Կարծում ենք՝ քարոզխոսությանն առնչվող ցանկացած նյութ պետք է ծառայի որոշակի նպատակների՝ ուղղորդի ընթերցողի միտքը դեպի քրիստոնեական բարոյական արժեհամակարգը, ներկայացնի Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունը, հոգեկան խաղաղություն պարգեւի։ Ներսես վրդ. Դանիելյանցն իր այս քարոզգրքով թերեւս հաջողությամբ լուծել է վերոնշյալ խնդիրները։ Քարոզգիրքը ծավալուն չէ. հեղինակի խոսքը գեղեցիկ եւ ազդեցիկ է, բառապաշարը՝ հարուստ եւ յուրօրինակ։ Քարոզները տարաբովանդակ են, չեն կրկնում միմյանց, սակայն դրանցում նշմարվում են հեղինակի հիմնական նպատակն ու ասելիքը։ Սույն գիրքը վարդապետի հոգու ինքնաբուխ եւ անկեղծ խոսքն է՝ քրիստոնեական հավատի մի տպավորիչ քարոզ. *«Կեանքին գաղտնիքը հաւատքով միայն կրնայ լուծուիլ. հաւատքը կեանքն իսկ է, կեանքը՝ յոյս, եւ յոյսը՝ սէր. առանց այս երրորդութեան ոչ կեանք կայ իրական եւ ոչ երջանկութիւն տեւական: Հաւատացէք՝ պիտի յուսաք, յուսացէք՝ պիտի սիրէք, սիրեցէք՝ պիտի ապրիք....»* (էջ 23)։

Աստղիկ ՉԱՆԹԻԿՅԱՆ

Մեր վազքը

20-րդ դարի նշանավոր գրող Հրանտ Մաթեւոսյանը ծնվել է 1935 թվականին: Գրականության ասպարեզ է մուտք գործել դարի 60-ական թվականներին՝ իր գրչով նոր շունչ տալով արձակին: Հրանտ Մաթեւոսյանի շնորհիվ հայ գրականության մեջ հայտնվեց նոր հերոս, որի խնդիրն էր՝ շրջանցելով հեշտ ու շվայտ կյանքը՝ հասկանալ գյուղական առօրյայի դժվարություններն ու ծանրությունը: Հայ գրականությունը դարձավ առավել ընդգրկուն, երբ սկսեց քննել կյանքի այն կողմերը, որոնք դուրս էին մնացել ուշադրության շրջագծից: Արձակի այս շարժման մեջ մեծ ներդրում ունեցավ Հրանտ Մաթեւոսյանը: Նրա խոսքը որքան դյուրին, նույնքան եւ դժվար է հասկանալ: Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործություններում արհամարհված են այն հերոսները, որոնք դժվարություններից խուսափելով՝ լքում, թողնում են գյուղը, ծվարում քաղաքներում, որտեղ եւ նրանց հիշողության մեջ փլուզվում է անցյալի հայրենի տունը, մոռացվում են մանկության տարիները, եւ ի վերջո՝ ոչնչանում ամեն բան:

Գրողի մտքի հայրենիքն ու հանգրվանը գյուղը եւ գյուղական միջավայրն են, որոնք եւ մաթեւոսյանական արվեստի ինքնօրինակ դրսեւորումը, մտածելակերպի դիմագիծը, ընթերցողի հետ խոսելու ձեւը, մեկնակետն ու ավարտն են... եւ ի վերջո՝ հաղթանակը:

«Մեր վազքը» պատմվածքն սկսվում է գյուղական կյանքի եւ գյուղում տիրող ծանր ժամանակների հետզհետե զարգացող նկարագրությամբ, որը հաջորդող էջերում առավել պատկերավոր եւ հուզիչ է դառնում. «....պատերազմի օրերն էին.... իսկ մեր հայրերը ռազմաճակատում էին»: Հրանտ Մաթեւոսյանը վեր է հանում գյուղական կյանքի բոլոր դժվարությունները, տալիս գյուղում արմատավորված «վախվորած» մտածելակերպի իրական բնութագիրը. «Մահը չէր հասկանա, իբր, որ օտարի անվան տակ հայի տղա է, ու ետ կդառնար ձեռքերը պարապ»: Այստեղ են ուրվագծվում հերոսի մտածելակերպի սահմանները, բացահայտվում նրա հոգեկան ապրումներն ու ձգտումները, սակայն հարցն առավել ընդգրկուն է դառնում, երբ սկսում ենք որոնել ստեղծված իրավիճակի իրական պատճառը, որը տվյալ դեպքում հեղինակն իսկ բացահայտում է՝ «.... նրա եղբայրները դառնալիս էին եղել մեկ տարեկան ու մեռնելիս....»: Առաջին հայացքից պատմվածքում վառ երանգներով դեռ գոյատեւում են «պահպանողական ավանդույթները», չէ՞ որ «....պառավները նրա մորը խորհուրդ էին տվել երեխաների վրա թուրքի ու քրդի մի օտար անուն դնել»:

Հաջորդող հատվածներում գործողությունները կառուցվում եւ զարգանում են Օտարի ու նրա դասարանի շրջանակում. այստեղ են սկսվում ծիծաղը, քմծիծաղը, ծաղրն ու արհամարհանքը, այստեղ է Մադաթի մեջ արթնանում կենդանին եւ փորձում խեղդել Օտարին.... չէ՞ որ նա օտար էր: Այստեղ է նրանց մեջ հառնում «եսասիրություն» կոչվածն իր բոլոր դրսեւորումներով: Արդյունքում՝ ոտնահարվում է Օտարը՝ որպես ընկեր եւ առհասարակ որպես մարդ: Օտարը նրանց նման չէր... նրանցից էր, բայց միաժամանակ տարբերվում էր նրանցից: Եվ այս է խոցում փոքրիկ հերոսին՝ անտեսելով նրա խեղճությունն ու հորը. «Օտարի հոր սիրտը հիվանդ էր. նվում էր ու չէր մեռնում, նվում-նվում էր ու չէր մեռնում»: Փոքրիկ Արտավազդի եւ նրա հիվանդ հոր միակ հույսն ընտանիքի անգրագետ մայրն էր: Ստեղծված իրավիճակը եւ հատկապես Օտարին հասկանալու համար տեղին է հիշել Հովհաննես Շիրազի խոսքերը.

Մեր հույսի դուռն է մայրս....
Մեր հերն ու մերն է մայրս....
Մայրս, մեր հացն է մայրս....

Պատերազմ էր, դատարկություն: Գյուղում տղամարդկանցից միայն Օտարի հայրն էր մնացել, հիվանդ էր... նվնվում էր, բայց չէր մեռնում: Նաեւ սրանից էին ծնվել Օտարի նկատմամբ այն արհամարհանքն ու հակակրանքը, որոնց առջեւ անզոր էր, մենակ, ամաչում էր. չէ՞ որ բոլորի հայրերն այնտեղ են՝պատերազմում, իսկ իր հայրը... Հիվանդությունն իր ողջ ծանրությամբ մաշում էր Օտարի հորը: Նա ամաչում էր, որ գյուղի միակ տղամարդն է. հաճախ իրեն արդարացնելու համար «....մայրերի ձեռքից կացինը վերցնում էր, որպեսզի ինքն աներ փայտ ջարդելու տղամարդու այդ գործը»: Այստեղ հեղինակը զարգացնում է գոյության պայքարի հիմնախնդիրը, որը հետզհետե հասնում է իր գագաթնակետին, սակայն լուծում չի ստանում:

«Մեր վազքը» պատմվածքում նկատելի է, որ գոյության պայքարն ընթանում է հետեւյալ փոխկապակցված հաջորդականությամբ. ստեղծագործության սկզբում Արտավազդին ապրեցնելու համար ծնողները, պայքարելով մահվան դեմ, նրան թաքցնում են Օտար անվան տակ, այսպիսով՝ Արտավազդին փոխարինում է Օտարը: Օտարի հայրը «պայքարում էր» հիվանդ սրտի դեմ: Ռազմագիտության ուսուցչուհին իր մահացած եղբորը տեսնում էր Մադաթի կերպարում:

«Վազք» կոչվածը դարձել էր երեխաների կյանքի իմաստը. այդ վազքից հետ մնալը կնշանակեր պարտություն, որին նրանք պատրաստ չէին... չէ՞ որ երեխաներ էին: Պատերազմն անտարբեր չէր անցնում երեխաների կողքով. իր հետքն էր դրոշմել անգամ նրանց աչքերում եւ մտքում՝ թելադրելով նրանց առօրյան՝ «....նրանք զորավարժություն էին անում»:

Չնայած Օտարն արհամարհված ու օտարված էր «վազքի ճանապարհի» իր ընկերներից, սակայն վազքից դուրս գալ նա պարզապես չէր կարող: Միայն ռազմագիտության ուսուցչուհու հրամանով էր այդ խմբի մեջ Օտարն իրեն արժեւորված ու գնահատված զգում, օտար չէր զգում, չէ՞ որ ինքն էլ պետք է հասներ սղոցարաններ, ինքն էլ պետք է թեփ բերեր... Օտարը «վազքի» սկզբում ընկերների հետ էր, սակայն այդ «վազքի» մեջ երկար մնալն ուղղակի նրա ուժերից վեր էր, չնայած որ դա նրա մարմնի պահանջն էր. «Վազքը իմ մարմնի պահանջն էր, ինչպես որ թեւերի պահանջը ճախրն է»: Սղոցարան չհասնելն Օտարի համար մեծ ցավ էր, բոլորը վազում են, միայն ինքը չէր... նրան տանջում էր այն միտքը, որ պիտի ասեն՝ «Բոլորը տեղ են հասել, ճամփի կեսից միայն Օտարն է ետ եկել»: Սա Օտարին ուժ էր տալիս. նրա ազնվությունն ու արդարությունն էին նրան առաջ մղում... բայց այլեւս չէր կարող:

Օտարը մենակ էր մնում կես ճանապարհին, քանի որ ընկերն այլեւս համբերել չէր կարող. չէր կարող, քանի որ նրա համար առավել բարձր եւ արժեքավոր էր հաղթանակը՝ թեփը, քան ընկերը՝ այդ անարգված ու արհամարհված օտարը, որն ուղղակի բեռ էր դարձել այդ «վազքի» ճանապարհին: Այստեղ հեղինակը ցույց է տալիս, որ Օտարն իր ողջ թուլությամբ հակադրվում էր հաղթանակին: Օտարի համար անընդունելի էր միակ ելքը, թե ճանապարհի եզրին նստոտած կանայք թեփ կտան իրեն... սակայն սա էր միակը ելքը:

Օտարին կես ճանապարհին թողած տղայի կերպարն ու ներաշխարհը բացահայտում է «վազքի» ճանապարհին հանդիպած



Բադալենց Դառը պապը. «Տո՛ շան տղա, քու հընկերոջը ճամփին դու ես թողել, ի՞նձ ես ասում ետ տար»: Այս խոսքերից հետո տղան ընկնում է խոր մտածումների մեջ, որոնք նրան մի պահ հանում են վազքի ընթացքից. նա այլեւս չէր կարողանում վազել «վազքին» համընթաց, մի պահ «վազքը» կարծես հեռանում էր նրանից. «Սրտիս զարկերը խլացան, եւ հիմա խոր լռություն էր.... ձյուների մեջ ես անշարժ էի»: Անշարժ էր նաեւ տղայի հուշերում պատկերված Օտարը. «....ձյուների մեջ իրենց ձորում ինքն ու խաչքարն էին եւ գրեթե չէին շարժվում»: Տղային տանջող մտքերն իրեն հանգիստ չէին տալիս: Իրեն արդարացնելու համար նա հաշտության եզրեր էր որոնում, թե՝ «....աջ ձեռքով կհանձնեմ նրան թեփը». այդ թեփը, այդ հաղթանակը, նա իրականում պատրաստ էր հանձնել Օտարին՝ անապատի ավազների մեջ մնացած այդ լուռ սֆինքսին, որին քամիները վաղ թե ուշ թաղելու էին ավազե տնակի մեջ, եւ որի հողաշեն կոթողն այլեւս չէր ապրելու:

«Ձայն չկար.... դասասենյակում մարդ չկար.... ուսուցչանոցում մարդ չկար: Բակն ամայի էր, ուսուցչանոցի շեմքին մի քիչ թեփ կար....»: Օտարին որեւէ մեկը չէր սպասում: Նրան սպասում էր միայն ուսուցչուհին. «Իսկ Արտավազդն ո՞ւր է»... վերջում միայն ժամացույցի ծանրոցն էր ճոճվում լռության մեջ՝ հավերժ խախտելով անդորը, եւ միայն ժամացույցի ծանրոցն էր ապրում դեռ:

«Ես կռացա, երկու ձեռքով հավաքեցի մեր բոլորիս բերած թեփը, եւ ամբողջ թեփը եղավ մի բուռ աղբ....»: «Վազքից» միայն այդ մի բուռ թեփն էր մնացել, իսկ Օտարն այլեւս չկար: Այս հատվածն ամփոփում է պատմվածքի ողջ գաղափարը, թե քանիսն են պատրաստ իրենց ընկերոջն օգնելու համար դուրս գալ իրենց «վազքից»... կյանքի վազքից: Այստեղ հեղինակը բացահայտ մատնացույց է անում ընկեր–թեփ հարաբերությունը, որի արդյունքում «թեփը»՝ այդ մի բուռ աղբը, փոխարինում է Օտարին:

Սղոցարաններից բերված այդ ամբողջ թեփն ընդամենը մի բուռ էր, մի բուռ աղբ եւ ոչ ավելին, իսկ Օտարը...

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լեւ Տոլստոյի հոգեհանգիստը...

↩ էջ 5

1910 թվականին Լեւ Տոլստոյի մահը սգում էր ողջ աշխարհը: Իսկ հայկական եկեղեցիներում Հայոց հայրապետի կարգադրությամբ հոգեհանգստյան կարգ կատարելու որոշումը բացառիկ իրադարձություններից էր, որին ոչ միանշանակ արձագանքեցին հենց եկեղեցական շրջանակում:

Բենիկ վարդապետը հայ ժողովրդի հախուռն ու հակասական զգացմունքների մասին իր խորհրդածությունները գրում է «Հովիտ»-ում.

«Հայ ժողովուրդն աշխարհից ոչ միայն յետ չընկաւ, այլ մինչ իսկ առաջ ընկաւ մեծ մարդուն յարգանքով ցօղելու գործում:

Հայ տաճարներն ամենից առաջ իրենց դռները լայն բացին այն հազարաւոր աղօթողների առաջ, որոնք հոսանքով լցուեցին՝ հոգեհանգստեան կարգով պատուելու մեծ մարդու յիշատակը:

Հայկական հաստատութիւնները յոտնկայս եւ խորհրդաւոր լռութեամբ պատուեցին այն:

Հայ մամուլը գերմարդ յայտարարեց յարգանքի արժանի ննջեցեալին:

....Ես միանում եմ հայ մամուլին եւ խորին յարգանքի ծունկ եմ խոնարհում այն երջանիկ բլրի վրայ, որ Եասննայա-Պոլեանայի մարգարէի երկրաւոր մնացորդն է ամփոփում....»:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե հայկական եկեղեցին

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.12.2022 թ.
Տպաքանակը՝ 1225